



10-9607

2-50

May ... 32

- 1 Shrubby juniper
- 2 Clump of tall shrubs
- 3 Large shrub-like tree
- 4 Shrub-like tree
- 5 Juniper Larch-like
- 6 Large evergreen
- 7 Large leafy shrub 100
- 8 White fir
- 9 White fir 2002
- 10 M. t. megalocarpus
- 11 Fir



ԱՐ

ՀՐԱՏ. ԲԺ. Ա. ԲՈՒԴՈՒՂԵԱՆԻ


616.3

0 - 94

Printed in Turkey

# ԱՍԱՄՈՔՍԻ ԿԱՏԱՐՐԸ

(ԱՍԱՄՈՔՍԻ ՄԻ ԳԼԽԻ ՀԵԽԱՆԳՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ)



Printed in Turkey

ԿԱԶՄԵՑ ԲԺՊ. Վ. ՕՐԼՈՎԱԿԻ

(ՄԻԿ ՊԱՏԿԵՐԱԾ.)

+ 2 / 2 +

201

Ա. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ  
ՊՈՏՀԿԻՆԵԱՆ ԱՐԱԳԱԾԻՊ ՏՊԱՐԱՆ  
1905

16437

Дозволено цензурою. С.-Петербургъ, 8 Января 1903 года.



3190

39

## ՅԱՌԱՋԱԲԱՆԻ ՏԵՂ

Ստամբուլի հիւանդութիւնները ծանր են և յանախ գժուար բուժելի: Մարզուս սնունդը կատարւում է ստամբուլի և աղիքների միջնորդութեամբ, ուստի հասկանալի է, որ կանոնաւոր և պատշաճ սննդից շեղուելուց օրգանիզմը պէտք է հիւանդանալ:

Ոչ թէ միայն անկանոն և մշտական հարկից պակաս և միակողմանի սնունդը, ինչպէս պատահում է բանուորների մօտ գործարաններում, այլ և քաղցածութիւնը, ինչից ևս առաջացած լինի, օրինակ ոչ պարարտ տարիները յառաջացնում են ստամբուլի գանազան հիւանդութիւններ:

Մշտական ժողովրդական ճաշարանները և կօպերացիալի \*) սկզբունքը—սպառող ընկերութիւնները—կարող են մեծ դեր խաղալ ժողովրդական առողջապահութեան համար. բայց զժրադ-

\*) Տես բժ. Խուղուղեան «Կարիք և բարեգործութիւն»:

գարար մեղ մօտ ալդ տեսակէտից ոչինչ որուած չէ:

Կօօպերացիան, ներկայ գարուս ալդ հսկալ ուժը, գեռ մեղ մօտ բոլորովին արձատ չէ ձգել:

Թիֆլիսի քաղաքային մասի խանութները մեջ ժառայութիւն են մատուցանում հասարակութեան: Կարծում ենք, որ նրանց օգուար կրկնակի կրկներ, եթէ քաղաքային վարչութիւնը հիմներ նորմալ հաշարաններ նոր հիմունքների վրայ հաստատուած:

Սլդ տեսակ ճաշարանները կարող էին ժառայել իրեւ կրթական հիմնարկութիւններ, որտեղից կարող էին տարածուել առողջապահական գաղափարներ կանոնաւոր սննդի մասին և օրինակ կդառնային մեր միւս քաղաքներին:

Կարծեօք վճռուած է մասի ալդպիսի խանութներ հիմնել Թիֆլիսի բոլոր թաղերում: Շատ օդտակար կլիներ միաժամանակ բաց անել և քաղաքային նորմալ ճաշարաններ: Ժողովուրդը շատ զոհ կլիներ, որովհետեւ նա բացի կանոնաւոր սննդից, անահասական տեսակէտից ևս օդուտ կստանար: — Ահա Զեղ մի մարդասիրական ձեռնարկութիւն:

Ի՞նչ է ձեռնարկուած Բաղւում բանուորների համար այս մաքով: Համարեալ ոչինչ:

Պէտք է տեսնել, ինչ են այնտեղ բանուորները: Զնայելով նոցա գաժան աշխատանքին, բոլոր

ժամանակը չորուցամաք և ծիակերպ սնունդ են  
ստանում:

Արդարեւ, կան մի քանի փորձեր նրանց զբու-  
թիւնը բարւոքելու, բայց բառ կարիքի, այդ շատ քիչ է:

Այսուեղ էլ կօօպերացիան մեծ գեր կարող է  
խաղալ, միայն ցանկալի է այդ զաղափարները որ-  
քան կարելի է ընդարձակել ժողովրդի մեջ:

Մեր բանուորները ինքեանք զբա համար  
պատրաստուած չեն: Հարկաւոր է, որ բանիմաց  
երիտասարդութիւնը նրանց ղեկավարէ:

Դորձարանատէրերը վերջապէս պարտական  
են հասկանալու, որ նրանց բանուորները բնական  
և բարոյական իրաւունք ունին իւրեանց զբու-  
թեան բարւորման: Բանուորն էլ դորձարանի փո-  
քրիկ տէրն և մասնակիցն է:

Յալանի է, որ առողջ զիւղացին շնորհիւ հողի  
և փողի պակասութեան, թողնում է զիւղը և բո-  
լորովին հողեպէս և բարոյապէս կորչում է բայցա-  
քալին կեանքի ճահնի մեջ, և իւր զրութիւնը  
բարւոքելու փոխարէն աւելի է վատացնում:

Հարկաւոր է օրինակ առնել մի բանի արտա-  
սահմանի գործարաններից, որտեղ բանուորները  
փոքրիկ տէրերն են հանդիսանում, որտեղ կայ և  
երեխաների համար օրինակելի դպրոց, յարմար և  
մաքավարի բնակարաններ, բաղանիս, օժանդակիչ  
և խնայողական արկղներ, թատրոններ, ընթերցա-

րան-գրադարաններ և ծերութեան հասակում ան-  
հոգ զրութիւն—ապահովութիւն և կենսաթոշակ:

Տարակոյս չկալ, որ մեղ մօտ շատ երեխաններ  
մեռնում են. զրա պատճառներից մէկն է քաղաք-  
ներում լաւ կաթի պակասութիւնը՝ շնորհիւ կա-  
թի անզուսպ ֆալսիֆիկացիալի անբարեխղնու-  
թեան մանրավաճառների կողմից:

Ֆրանսիալի, Գերմանիալի և Ռուսաստանի  
վիճակազրութեան հիման վրայ, յալտնի է, որ երե-  
խալոց մահացիութիւնը ահազին բարձրութեան է  
հասնում, մասաւանդ ժողովրդի այն խաւերում,  
որտեղ մալրերը հարկազրուած են իւրեանց հացը  
ինքեանը մատակարարել ծանր աշխատանքի դնով,  
զիսաւորը առանց բաւականացուցիչ սննդի:

Մեղ մօտ աղքատ գասակարգը մեծամասնու-  
թիւնն է կաղմում, աղքատ մալրերը հարկազրուած  
են յաճախակի աշխատանք փնտոել տանից գուրս-  
ի հարկէ խեղն երեխանները կիսաքաղցած են մնում  
և շատ անդամ հիւանդանում ու մեռնում են:

Ժամ է և մեղ օդնութեան հասնել մալրերի  
ալդ անել և ծանր զրութեան՝ հիմք դնելով ալն-  
պիսի մի հիմնարկութեան, որտեղից կարող են  
ստանալ երեխանների համար մաքուր և լաւ կաթ:

Ալգոլիսի «Մի կաթիլ կաթ» կոչուած հիմ-  
նարկութեան նախաձեռնութիւնը, ինչպէս արտա-  
սահմանում, ալստեղ կարող էր իւր վրայ առնել

բաղաբալին վարչութիւնը կամ մի որեւէ բարեգործական ընկերութիւն, իսկ միջոցները կարող են խկոյն ստացուել բարեգործների կողմից: Գլխաւորն է նախաձեռնութիւնը:

Այսաւել Պետերբուրգում ապաստարաններից մէկում, շնորհիւ նուիրուած մի դումարի, տալիս են անփող, երեխաների համար կովի և այծի կաթ: Այսաւել զիմում են ոչ միայն չքաւոր, այլ և ունեւոր ծնողները, խնդրելով վաճառել կաթ մինչեւ անդամ բարձր գնով, որովհետեւ հաւատացած են, որ այդ կաթը խկապէս թարմ և լաւն է: Կաթը տալիս են զլխաւորապէս առաւօտները: Մալրերը բերում են առաւօտեան մի շիշ մի բանի ծծակներով (բօժոկ) և ստանում են կովի կամ այծի կաթ, շաբաթը մի անդամ մալրերը բերում են իւրեանց երեխաներին կշռելու և հետազոտելու համար: Հետեանքները հիանալի են:

Այս տեսակ չքաւոր մալրերին անփող կաթ բաժանելիք ներկայացնում է ոչ միայն բարեգործութիւն, այլ և կուլտուրական երեութիւն:

Որբան աւելի բարձրանան զիւղերում և բաղաբներում առողջապահական պայմանները, նոյնչափ աւելի պակաս կլինին հիւանդանոցների վերայ արուած ծախսերը:

ԲԺ. Ա. Բուդուղեան:



## Ա.

ՄՆՈՒՆԴՐ ԵՒ ՆՐԱ ՓՈՓՈԽՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԲԵ  
ՐԱՆԻ ԽՈՌՈՉՈՒՄ ԵՒ ՍՏԱՄՈՔՍՈՒՄ

Մննդի բաղադրիչ մասերը, մննդի փոփոխութիւնները բերանի խոռոշում. — Խուզք: — Ստամոքսը. — Ստամոքսալին նիւթը. — Մննդի փոփոխութիւնները ստամոքսում: — Աղիքների դերը մարմնի մէջ: — Հարկաւո՞ր է արդեօք ստամոքսը:

Ամեն ձեկին լայտնի է, որ մարդու կեանքի համար անհրաժեշտ է պահպանել մի շարք պայմաններ:

Մարդուն հարկաւոք է լոյս, օդ, տաքութիւն, սնունդ և ալին: Առանց այդ պայմանների անկարելի է ապրել:

Առանց սննդի մարդու սովամահ կլինի: Սակայն սնունդը պէտք է որոշ բազագրութիւն ունենայ:

Նա պէտք է պարունակէ չուք, աղեր, սպիտակուցներ, ածխաջրեր և ճարպեր:

Զուրը մենք ընդունում ենք հասարակ շրի ծեսով, ապա թելի, սուրճի, արգանակի, կաթի և ուրիշ հեղուկ սննդալին նիւթերի հետ:

Պիհնդ կամ կարծր սննդային նիւթերը, օրինակ հաց, միս, նոյնպէս բաւական շատ չուր են պարունակում:

Աղը մենք ընդունում ենք զիսաւորապէս կերակուրների հետ համեմած աղի ձեռվի:

Սպիտակուցները, ածխաջրերը և ճարպերը պարունակում են միասին շատ սննդային նիւթերի մէջ, բայց ոչ միւնոյն բանակութեամբ:

Մի բանի նիւթերի մէջ ամենից շատ են սպիտակուցները, օրինակ մսի և ձուի մէջ: Ուրիշ նիւթերում ամենից շատ են ածխաջրերը, օրինակ հացի, գետնախնձորի և շատ ուրիշ օսլային սննդային նիւթերի մէջ: Երրորդ նիւթերի մէջ ամենից շատ են ճարպերը, օրինակ մսի իւղալի պատառների մէջ:

Բոլոր այդ նիւթերը մենք մացնում ենք մեր օրդանիզմի մէջ սննդի հետ միասին, սննդամարսողական խողովակի միջոցով:

Այդ նիւթերը յայտնի կերպով վերափոխուելով, մտնում են արեան մէջ և սնուցանում են մեր մարմինը: Բայց որպէսզի նրանք կարողանան արեան շրջանը մտնել, մեր օրդանիզմը պէտք է վերամշակէ, պատրաստէ և հեղուկի վերածէ նրանց:

Միայն այդ ձեռվի նրանք կարող են ձձուել արեան մէջ և օգուտ տալ մեր մարմնին:

Սննդալին նիւթերի հեղուկ վիճակի վերած-  
ւելը կատարւում է սննդամարսողական խողովա-  
կում:

Սննդամարսողական խողովակը սկիզբն է առ-  
նում բերանի խոռոչից, ուր ամենից առաջ մրտ-  
նում է սնունդը: Այստեղ կերտակրի պատառք  
փշրւում, մանրացնուում է ատամներով:

Որքան պատառք լաւ է լինում մանրացրած,  
այնչափ հեշտութեամբ սնունդը կարող է յետոց  
լուծուել: Դրա համար երբէք պէտք չէ շտապով  
ուտել, բնդհակառակն, պէտք է աշխատել լաւ ծա-  
ծել կերտակուրը:

Իհարկէ, սնունդը լաւ մանրացնելու կամ ծա-  
ծելու համար հարկաւոր է ունենալ առողջ ա-  
տամներ:

Բերանի խոռոչում սնունդը բացի մանրանա-  
լուց ենթարկւում է ուրիշ փոփոխութեան ևս:  
Սնունդը բնդունելիս դուրս է դալիս կամ արտա-  
թորւում է մի յատուկ հեղուկ, որ կոչւում է  
թուրք:

Ամենքին յալտանի է որ «բաղցած մարդու բե-  
րանի չուրք վաղում է» ուտելիք տեսնելիս:

Թուրքը յառաջանում է մարդու բերանի մէջ:  
Այդ հեղուկը չուրք չէ, նա, լիրակի, պարունակում  
է շատ չուրք, որ լուծում է սննդի մէջ գտնուած

աղերը և ուրիշ մի բանի սննդալին նիւթեր, ինչպէս շաքարը:

Զուրը, բացի զբանից, նօսրացնում է կերակրի գնդակը, զանգուածը: Բացի չրից թուքի մէջ կատ մի առանձին նիւթ, որ կոչում է պտիալին: Այդ նիւթը սննդի չուժուող ածխաշրերը լուծուող դրութեան է վերածում:

Ուրեմն արդէն բերանի խոռոչում սննդալին նիւթերի մի մասը, այն է ածխաշրերը, վերածում են լուծուող դրութեան: Լուծուած ածխաշրերը կարող են արդէն ճծուել, այսինքն մտնել արեան մէջ և օգտաւելու լինել օրգանիզմին:

Այսպիսով, կերակրի գնդակը արդէն բերանի խոռոչում ենթարկւում է էական փոփոխութիւնների: Այժմ նա կուլ է զնում, շատ արագ ներքե է իշնում մի խողովակի միջոցով, որ կոչում է կերակրափող (որկոր) և թափւում է ստամոքսի մէջ:

Կերակրափողի մէջ սնունդը ամենեին չէ փոփոխւում: Ստամոքսում նա ենթարկւում է աւելի խիստ փոփոխութիւնների, բան բերանի խոռոչում:

Ստամոքսը, ինչպէս ասացինք, վերեւում միանում է կերակրափողի հետ, զրեթէ 6-րդ կողի հանգեց: Այդաեղից ստամոքսը լայնացող խողովակի ծեռվ իշնում է ներքե և զեղի աշ և վերածում

է աւելի նեղ և շատ երկար խողովակի, որ կոչում է աղիք:

Ստամոքսի ներքեխ սահմանը բնկնում է ծոտաւորապէս պորափց երկու մատ բարձր: Ուրեմն ստամոքսի զիխուառը մասը համապատասխանում է, այսպէս կոչուած, որափ գդալի շրջանին:

Ստամոքսի պատերը բաշուած են ներսից լորձաթաղանթով, ինչպէս լինում է յետ շրջած շրթունքի վրայ: Այդ լորձաթաղանթը \*) բազկացած է շատ փոքրիկ զեղձերի կոյտից:

Դրսից նա ծածկուած է մկանունքներով և վերշապէս որովայնալին ներքնաթաղանթով:

Մկանունքները սահմանուած են նրա համար, որ շփեն և շարժեն սնունդը դեպի աղիքները: Այդ մկանունքները դանաղանուում են ծեռքի և ոտքի մկանունքներից նրանով, որ կծկուում են շատ դանդաղ և թուլ կերպով:

Նրանց կծկումները նման են անծրեալին ճինուների կծկման, ուստի և այդ կծկումները կոչում են ճինուանման:

Ստամոքսի լորձաթաղանթի զեղձերը արտադրում են մի հեղուկ, որ կոչւում է ստամոքսալին հիւթ: Այդ հեղուկի արտաթօրումն առաջ է գալիս ոչ այնքան նրանից, որ սնունդը մտնում է լիս:

Տես բժ. Խուզուղեանի Ձ արակիչ Հիւանդութիւններ:

ստամոքսի մէջ, այլ համեղ կերակրի մաքից, երեւակալութիւնից:

Որքան լաւ է ախորժակը, այնքան շատ է արտաթորւում այդ կարեօր հեղուկը և այնքան աւելի զործունեալ, այսինքն աւելի եռանդուն կերպով մարսեցնում է սնունդը:

Այդ հեղուկը վերամշակում է սնունդը, որ արդէն մի քիչ փոխուած է լինում բերանի խռովութեալ:

Նու բաղկացած է չրից, բայց սպարունակում է նաև ազալին թթու մինչև  $0,2^{\circ}/_0$  և երկու կարեօր նիւթեր, այսպէս կոչուած պէպսին և մազացիտ (մալեա) կամ խիմոգին:

Պէպսինը և ազալին թթուն ներգործում են սննդի սպիտակուցալին նիւթերի վրայ, որոնք ամենակարեօր են օրգանիզմի համար. նրանք վերածում են այդ նիւթերը աւելի հեղուկ վիճակի, որ ձեռք և կարող են ծծուել այդ փոփոխուած սպիտակուցալին նիւթերը:

Ազալին թթուն բացի զրանից, սպանում է այն վնասակար կենդանի էակները, որոնք կոչւում են միկրոբներ և օրոնք բնկել են ստամոքսի մէջ կերակուրի հետ:

Խիմոգինը շուռ է տալիս կաթը, վերածելով նրան հեղուկից փոքր դնդակների, որոնք արդէն

հեշտութեամբ ևն մարսւում: Բայցի զրանից խիմո-  
ղինք ունի և ուրիշ յատկութիւններ:

Ճարպերը ստամոքսում չեն փոխուում, ինչպէս  
չեն փոխուում և բերանի խոռոչում:

Վերջապէս, ածխաշրերը սնունդը բնգունելուց  
անմիջապէս յեաով փոխուում են ստամոքսում, կուլ-  
տուած թուրի ազգեցութեամբ նրանք վերածւում  
են լուծուած զրութեան: Իսկ երբ ստամոքսալին  
հիւթի արտաթօրումը սաստկանում է, թուրի ազ-  
գեցութիւնը զագարում է:

Այսպիսով, սնունդը նշանաւոր փոփոխու-  
թիւններ է կրում բերանի խոռոչում և ստամոք-  
սում: Նրա բազազրիչ մասերից շատերը լուծում  
են և մասամբ ձմւում, այսինքն մանում են ա-  
րեան մէջ:

Մնացած մասը մանում է ազիքների մէջ,  
որոնց սկզբնական մասը, ստամոքսին անմիջապէս  
կից, կոչւում է տասներկումաանալին ազիք:

Ազիքների մէջ սնունդը ենթարկւում է յե-  
տագայ շատ կարեոր փոփոխութիւնների, աւելի  
նշանաւոր, քան բերանի խոռոչում և ստամոք-  
սում:

Այն ամենը ինչ որ կարող է լուծուել, այս-  
տեղ լուծում է և ձմւում: Այսակայ փոփոխու-  
թեան են ենթարկւում ոչ միայն ապիտակուցները  
և ածխաշրերը, այլ և նարպերը:

Այդ փափոխութիւնները կատարւում են զբլ-  
խաւորապէս տասներկումատնալին աղիքի մէջ և  
բարակ աղիք կոչուած աղիքների հարեան մասերի  
մէջ:

Վերամշակուած սննդի ձծուելը ամենից խիստ  
կերպով յայտնւում է բարակ աղիքների մէջ: Այդ  
աղիքները ամենակարեորներն են. նրանց հիւան-  
դանալր շատ լուրջ և վնասակար հիւանդութիւն  
է առաջ բերուծ:

Բայց սննդի կերպարանափոխութիւնների մա-  
սին, երբ նա ստամոքսից գուրս դալով անցնում է  
աղիքները, մէնք կխօսենք յետոյ, առանձին, ա-  
ղիքների դումի (կատարը) յօդուածում:

Ուրեմն ստամոքսի մէջ մէջ ծաւալով կա-  
տարւում է սննդի վերամշակութիւնը, կամ ինչ-  
պէս ասում են, սննդի եփուելը: Սակայն այդ եփ-  
ուած սնունդը այդաեղ ըիչ է ձծում:

Ստամոքսը, բացի զրանից, այն կարեոր նշա-  
նակութիւնն ունի, որ իբրև մարդու պահապան,  
նա բաց չէ թողնում, որ աղիքների մէջ մտնեն  
ախտաժէտ կամ ախտածին միկրոբներ:

Ախտահանի այդ դերը մէր մտրմնի մէջ նա  
հաւատարմութեամբ կատարում է միայն այն ժա-  
մանակ, երբ արտադրւում է ստամոքսալին հիւթը:  
Ծոմ ստամոքսին, ինչպէս առաւօտները, միկրո-

ները կարող են աղաս անցնել նրա միջով աղիք-ները:

Այդ կարեոր է լիշել: Այժմ հասկանալի է ինչու, օրինակ, խօլերայի մեծ համաճարակի ժամանակ բոլոր բժիշկները շարունակ խորհուրդ են տալիս զուրս չգալ անից դատարկ փորով, անօթի:

Պահպանելով այդ պայմանը, զուք աւելի քիչ կենթարկուեր այդ հիւանդութեամբ վարակուելու վանդին: Այս կանոնը, ի հարկէ, նշանակութիւն ունի և ամենօրեալ կեանըի մէջ:

**34** Մնունը, սակայն, ինչպէս մենք աեստնք, փոխոխում և մշակում է զլխաւորապէս աղիքների մէջ: Այստեղ լուծում են և սպիտակուցները և ածխացրերը և նարապերը: Բարակ աղիքների մէջ էլ զլխաւորապէս կատարում է փոփոխուած սննդի ձժումն:

Պատահել է, որ հիւանդ սատամորսը ամբողջովին կարել - հեռացրել են օրգանիզմից: Այդպիսի օպերացեա աեղի է ունեցել մինչև այժմ 19 տնգամ: Սատամորսը հեռացնելուց յետոյ, հիւանդները իրանց լաւ են զգացել: Սատամորի զործը կատարում է այս զեպքում բարակ աղիքը, որը սակայն կարողանում է զիմանալ այդ ժանր կոչման միայն մի որոշ ժամանակ, այն էլ սահմանափակ կերպով: Կը նշանակէ, որ սատամորը ինքնանձնական աւելորդ չէ, այլ իւր անհրաժեշտ ակն ու գանիզմի մէջ:



## ՍՏԱՄՊՈՔՍԻ ԿԱԾԱՐՐԻ ՊԱՏՃԱՌԻ

Փշաղած սնունդ:—Չափաղանց ուտելը—որկրամուռութիւն:—Սնելն-դի անբաւարար ծամելը:—Փշաղած ատամները:—Սնունդ ընդու-նելու մէջ կանոնաւորութեան բացակալութիւնը:—Խիստ փոփո-խութիւն մի մննդից միւսը:—Ոգելից բժապելիքները:—Ժառան-դական նախատրամադրութիւնը և ոգելից բժապելիքների նրա հետ ունեցած կապը:—Կծու նիւթերը:—Ուրիշ օրդանների նի-անդութիւնները:

Ստամոքսը, ինչպէս և ուրիշ որևէ օրդան մար-դու մարմնի մէջ, կարող է հիւանդանալ: Ստա-մոքսի հիւանդութիւններ շատ կան:

Նրա ամենայանախ հիւանդութիւններից մինը ստամոքսի կատարըն է կամ նրա բորբոքումը (զում): Այդ հիւանդութիւնը շատ է տարա-ծուած:

Շատ սպատճառներից է նա առաջ դալիս: Ամենից առաջ էական նշանակութիւն ունի ինքը սնունդը:

Ստամոքսի համար անվնաս է միայն լաւ, թարմ, չփշացած սնունդը, երբ չափաւոր բանա-կութեամբ է ուտուում: Ազգպիսի սնունդը առողջ ստամոքսը միշտ վերամշակում է յօդուտ օրդա-նիզմի:

Յալց եթէ զուք սկսէք ուտել ոչ բոլորովին թորմ կերակուրներ, և բաւականանար մի քիչ փրտած կամ ինչպէս տառմ են «մի քիչ հոտած» սնընդովի, կարողէք հաւասացած լինել, որ կստանար ստամոքսի կատարը և որքան վատթար է ձեր սնունդը, այնքան արագ և խիստ ու վատանդաւոր կլինի կատարը:

Մի քանի զէպքերում այդպիսի ոչ թարմ սրնունդ մանաւանդ նախախորափկներ (զակուսկի), ինչպէս կալբաս, պանիր և ալին, ընդունելիր տուչ է բերում ստամոքսի և աղիքների այնպիսի սաստիկ կատարը, որ ամբողջ մարմինը արագ թունաւորւում է, և եթէ խսկոյն հիւանդին օդնութիւն չը հասցնեն, նաև կը մեռնի:

Այդ չը պէտք է մոռանալ: Փողոցներում, երկաթուղիների բուժեաներում, կալարաններում լաճախ կարող էք հանգիպէլ զանազան հոտած ձուկն, խաւեար և ուրիշ զանազան ուտելիքներ ծախողների: Չեղ առաջարկուած ապրանքի էժանութիւնը դրաւում է ձեզ, խսկ յետոյ քիչ է մնում, որ ձեր հողին աւանդէք առ Աստուած:

Դեռ լաւ է եթէ այդպիսի սննդից յետոյ զուք անմիջապէս վատ զգաք ձեզ, ձեր սիրտը խառնի և փսխէք, այդ շատ լաւ է, փսխելիր կը հեռացնէ ստամոքսից ընդունուած սնունդը և զուք կը փրկուէք: Այդպիսի զէպքում, երբ ամենափոքքը

կասկած է, ծագում ընդունուած սննդի վաս որակութեան մասին, երբ ամենափոքր սրտի խառնումն էր զգում, աւելի լաւ է աշխատել խկոյն փսխումն առաջ բերել, օրինակ մատերով խաղելով կոկորդը:

Աւելի վաս է, եթէ ալգափիսի հոտած ուտելիքից չետոյ սրատխառնութիւնը և փսխումը շուտով աեզի չունենալ: Կերածր այդ գեղքերում կարող է շուտով անցնել աղիքները և արագաբար առաջ բերել թունաւորումն:

Բարեբազգաբարար անցնելով աղիքները, շատ դէպքերում նա առաջ է բերում աղիքների խիստ սասափիկ կատարը, որն արտակայտում է առատ փորլուծելովը (սիւրկի): Փորի լուծելը ալսաեղ նոյնչափ օգատկար է, որչափ առաջին գեղքում փսխումը, նա հեռացնում է մնասակար սնունդը աղիքներից, հետեւբարար, նրանից բիշ բան կը մտնի արեան մէջ և մարմինը աւելի բիշ կենթարկուի թունաւորման վասնդին:

Բայց նոյն իսկ եթէ զուք զործածէր միշտ բայցառապէս լաւ սննդաբար կերակուք, զուք կարող էր զարծեալ հիւանդանալ ստամոքսի կատարը, եթէ չը պահպանէր մի բանի պայմաններ:

Ամենից առաջ չը պէտք է ուտել չափազանց շատ, ինչպէս ասում են՝ տրաքելու չափ: Նոյն իսկ թարմ սննդի չտփաղանց բանակութիւնը ստամոքսը չէ կարող տանել և կարող է հիւանդանալ:

Պիտր է միշտ մի ըիչ կիսաքաղցած մնալ,  
այսինքն ուտել այնքան, որ մարդ ժանրութիւն  
չգցալ, կամ ինչպէս տառւմ են, փորբ չը ուռչի:

Այդպիսով նրանք, որոնք ուտում են օրը մի  
անդամ, միշտ ենթարկուած են ստամոքսի կատար-  
րով հիւանդանալու վաւանդին: Եւ ճշմարիտ այդ-  
պիսի անձինք, աննդի բաւական բանակութիւն մացր-  
նելու համար, մի անդամից շատ են ուտում:

Մինչդեռ անհրաժեշտ է ընդունել սնունդ  
օրական մի բանի անդամ, զոնէ երեք անդամ:

Ամեն մի ընդունած սնունդ հարկաւոր է հիմ-  
նաւոր կերպով ժամել, մանրացնել բերանի խոռո-  
չում: Այդ ձեռով սնունդը աւելի հեշտ է վերամր-  
շակուում թէ թուրի և թէ ստամոքսալին հիւթի  
մէջ:

Այդ երկու հեղուկները այդ դէպքում աւելի  
հեշտութեամբ թափանցում են սննդալին զնդակ-  
ների մէջ և լուծում են նրա զանազան բաղադ-  
րիչ մասերը:

Շտապ ուտելու ժամանակ, կերակրի այդ-  
պիսի սննդարար փոփոխութիւնը երբեք չէ կարող  
կատարուել, սնունդը կը մտնի ստամոքսի մէջ մեծ  
զնդակներով:

Արտադրուող ստամոքսալին հիւթը սկսում է  
ներկործել այդ զնդակների արտաքին մասի վրայ:  
Եթէ զնդակը մեծ է, հիւթը չէ կարողանում թա-

փանցել զնդակի ներքին ծառերը. վերջինները զբա-  
նից սկսում են փշանալ և փակ: Դրանից տուաչ  
են գալիս զանազան նիւթեր, որոնք սասափիկ զրբ-  
դուում են ստամոքսը և տուաչ են բերում նրա  
կատարը:

Ստամոքսը կատարը հիւանդանում է, և այն  
ժամանակ, երբ գուշը չեք կարողանում լու փշել  
սնունդը բերանում, չը նայելով որ կամաց էր ու-  
տում:

Այդ լինում է երբ ստամներ չուներ, իսկ ս-  
տամները զլխաւորապէս սահմանուած են սնունդը  
մանրացնելու, փշելու համար: Փշացած ստամների  
ներկայութիւնը բերանի խոռոչում նոյնպէս ժա-  
մանակի ընթացքում, կարող է տուաչ բերել ստա-  
մոքսի կատարը:

Փշացած, փառղ ստամի մէջ զարդանում են  
վնասակար նիւթեր, որ արտակայտում է ի թիւս  
այլոց վաս հոտով և նոյն իսկ զարշահոտութեամբ  
բերանի մէջ:

Այդ նիւթերը թուքի կամ սննդի հետ ընկ-  
նում են ստամոքսի մէջ և զրգուելով նրան, տուաչ  
են բերում նրա կատարը:

Նրանց ներկայութիւնն, ուրեմն, վնասակար է  
եռակի, նրանք անպէտը են սննդի կանոնաւոր ման-  
րացման համար, մնունդ են ապլիս վնասակար նիւ-  
թերին, որոնք ապա մտնում են ստամոքսը, և վեր-

չապէս նպաստում ևն հարեւան առամների փշա-  
նալուն:

Կարեոր է ապա լիշել, որ ստամոքսը սովո-  
րում է աշխատել աւելի սասափի, արագ, որոշ  
ժամանակում: Որոշ ժամերում նա արագղրում է  
հիւթի ամենամեծ քանակութիւն: Այդ ժամանակ  
այդ հիւթը և ամենամեծ գործունեան է հանդի-  
սանում, այսինքն աւելի արագ և աւելի հեշտ է  
լուծում սննդարար նիւթերը:

Դրա համար ով ալսօր հաշում է, մի ժամա-  
նակ, վազր մի այլ ժամանակ, և տահասարակ ու-  
տելու համար որոշ ժամեր չունի, նա ստամոքսի  
կատարրով հիւանդանալու վասնդին է, ևնթարկում:

Հասկանալի է, ինչի համար այնքան յանախ  
է պատահում ստամոքսի կատարրից հիւանդանալը  
մեծ սոների ժամանակ, օրինակ զատկին, երբ կեան-  
ըի սովորական եղանակը խանդարում է:

Ստամոքսը սովորում է աշխատել աւելի եռան-  
դուն ոչ միայն օրուայ որոշ ժամերին, այլ բնուե-  
լանում է նաև որոշ սննդառութեան:

Երբ սնունդը միակերպ է երկարտակ ժամա-  
նակի բնթացրում, ստամոքսը ամենից լաւ է կատա-  
րում իր զործը այդ սննդի հետ:

Կերակրի յանկարծակի փոփոխութիւնը կա-  
րող է առաջ բերել ստամոքսի կատարը: Եւ, հշա-

րիտ յանախս պատահում է ստամոքսի կատարրով  
հիւանդանալլը երկարատև պասից յետոյ:

Սակայն կան նիւթեր, որ նոյն իսկ երկար  
զործածուելով, եթէ նրանք ներս են բնդունում  
չը փշացած, բնդունակ են առաջ բերել ստա-  
մոքսի կատարր:

Դրանց թուին պատկանում են ամենից առաջ  
ամեն տեսակ ողելից բմպելիքներ, ինչպէս օդի, զինի,  
զարեցուր և այլն:

Հասարակութեան մէջ, հշմարիտ, այն համոզ-  
մունքը կալ, թէ մի բաժակ օդին նաշխց առաջ աւելաց-  
նում է ախորժակը և նպաստում է մարսողութեան:

Կենդանիների վրայ արած փորձերը ցոլց են  
սալիս նոյնպէս, որ սպիրակի միանուագ բնդունելլը  
առաջ է բերում ստամոքսալին հիւթի սաստիկ  
արտաթորութիւն:

Բայց հասարակութեան այդ հայեացը շատ  
էլ նիշտ չէ: Ով չէ խճում ողելից բմպելիքներ, կամ  
խճում է սակաւ անդամ, նա աւելի լաւ կանէ,  
եթէ բոլորովին հրաժարուի նրանց զործածելուց:

Սպիրար, անկասկած, թոյն է առողջ օրգա-  
նիզմի համար: Երբ զործ են ածում նրան երկար  
ժամանակ, նոյն իսկ նուազ բանակութեամբ, նա  
ժամանակով դարձեալ առաջ է բերում ստամոքսի  
կատարր և ուրիշ օրգանների, դլխաւորապէս յեար-  
դի, հիւանդութիւն, իսկ այդ օրգանի հիւանդու-

թիւնները լուրջ են և զժուարութեամբ են բժիշկում:

Բայց և նրան, ով սովոր է խմել ամեն օր ճաշից առաջ մի բաժակ օդի կամ զինի, ևս չերմապէս խորհուրդ կտալի գէն ձղել այդ վնասակար սովորութիւնը:

Ճիշտ է, չէ կարելի ուրանալ, որ այլպիսի սովորութիւնից հրաժարուելը շատ անդամ հեշտ չէ, որովհետեւ մի բաժակ օդին կամ զինին արգարե, ախորժակ է զրգուռն խմելու սովորած մարդու մէջ: Բայց զրանից դեռ չէ հետեւում, թէ նա անվնասակար է:

Չէ որ մօրֆինիսար (ավիտն զործածողը) ևս չէ կարողանում եօլու գնալ առանց մօրֆինի (ավիտնի): Սա բաշում է գէպի իրան, նա առանց մօրֆինի կորած մարդ է, որովհետեւ ոչ մի բան շինել չէ կարողանում: Բայց երբ նա ընդունում է մօրֆին, վերագանում է նրա կենսունակ ուրախութիւնը, վերապանում է նրա ընկած եռանզր, շատ գէպը երում մօրֆինիսար ուղղակի լարութիւն առած մարդու տպաւորութիւն է թողնում մօրֆին ընդունելուց լեաով: Բայց բանի վարկեան կտեի այդ, և որքան մահարեր վատանդ կալ զրա մէջ:

Բայց չէ որ ամեն մի մարդ, առանց երկար մտածելու կասի, որ այդ սովորութիւնը վնասա-

կար է, որ նա տակետակ քանզում և կոծում է  
մօրֆինիսափ օրդանիզմը:

Ինչու ուրիշ տեսակ ենք վերաբերում մի  
բաժակ օդուն կամ զինուն: ԶԵ՞ որ դա ել միենոյն  
մօրֆինն է բրոնիկական ալքօնոլամոլի համար:

ԲԺՇկականութիւնը ցոյց է տալիս, որ ալքօ-  
նոլիզմի հետեանքները նոյնքան լուրջ և վտանգա-  
ւոր են, որքան մօրֆինիզմի:

Այդ հետեանքները լայտանուում են ալքօնոլի  
երկարատև զործածութեան ժամանակ, զիստառա-  
պէս լեարզի, մարսողական խոզովակի, արիւնատար  
անօթների և չղային սիսաեմի վրայ: Նրանք լայտ-  
անուում են ոչ միայն իրա՞ խմող մարզու, այլ նաև  
նրա սերնդի վրայ:

Աւելեմն կարեոր է լիշել, որ ամեն օր, ճաշից  
առաջ մի բաժակ օդի կամ զինի խմողն արդէն  
բրոնիրական ալքօնոլիկ է, որ վնաս է բերում իրան,  
որն լանախ անկարելի է լինում ուղղել նաև ապա-  
գայում:

Նրան ի հարկէ, արքեցող չէ կարելի անուա-  
նել. նա միայն ալքօնոլիկ է և եթէ նա խմում է  
ըից, ուրեմն չափաւոր ալքօնոլիկ է:

Բայց այդ սովորութիւնը վնասակար է մա-  
նաւանդ նրանց համար, ով բնութիւնից նախատը-  
մադրուած է լեարզի, չղային սիսաեմի, արիւնա-  
տար անօթների հիւանդութիւններին և մի բանի

այնպիսի ընդհանուր հիւանդութիւնների, որոնք  
հարուածում են ամբողջ օրդանիզմը:

Պէտք է լիշել, որ մի քանի հիւանդութիւն-  
ներ փոխազրւում են ժառանգաբար ծնողներից  
երեխաներին, օրինակ սիֆիլիսը:

Ուրիշ հիւանդութիւնները, թէև ուղղակի չեն  
անցնում երեխաներին, բայց զրա փոխարէն հա-  
մապատասխան օրդանը մարմնի մէջ լինում է աւե-  
լի խոցելի, կամ ինչպէս ասում է բժշկականու-  
թիւնը, նախատրամազրուած է լինում նոյն հի-  
ւանդութեան, որով առնչւում է ծնողներից մինը:

Մի քանի գէպըերում այդ ժառանգականու-  
թիւնը մի քիչ ուրիշ կերպ է արտայալտւում,  
այսինքն այնպէս, որ երեխաները հիւանդանում են  
մի այնպիսի հիւանդութեամբ, որն այսպէս առած,  
ազգական է ծնողների ունեցած հիւանդութեան:

Յալտնի է օրինակ, որ միենոյն ընտանիքում  
յանախ նրա մի քանի անդամները հիւանդանում  
են քարի հիւանդութեամբ, բայց այնպէս որ մի  
քանիսի մօտ քարերը զոյանում են լեարդի մէջ,  
ուրիշների մօտ—երիկամունքների կամ միզալին  
փամփուշտի մէջ:

Ուրիշ ընտանիքներում տիրում է յօդացու  
(պօգազրա), այն է—յաւ յօդերի, կաշուի, չղերի  
կամ զանազան ներքին օրդանների:

Անշուշտ մի քանի հիւանդութիւններ առանց

աղղեցութեան չեն մնում և սերնդի վրայ, ալսինքըն իրանց սերնդի մի բանի օրգանները գարծնում են աւելի խոցելի վնասակար պատճառների աղղեցութեան:

Ալգոլիսի վնասակար պատճառը, որ առողջ մարզի մօտ, առանց համապատասխան ժառանդականութեան, կր մնար առանց հետեւնքի կամ առաջ կր բերեր միայն կարճատե խանդարումն, ընդունակ է արդէն խկական հիւանդութիւն առաջ բերել ալգոլիսի մարզկանց մէջ:

Ալգ պատճառների մէջ նշանաւոր գեր պէտք է լսակացնուի 'ի թիւս այլոց և ոգելից ըմպելիքներին:

Ան անձանց համար, որոնք քիչ կայուն մարսողական խողովակ ունին և նախարածաղիք են լեարդի կամ չղալին սիստեմի հիւանդութեան, ոգելից ըմպելիքները նոյն իսկ չափաւոր քանակութեամբ անհետեանք չեն մնում:

Նրանք լանախ դարկ են տալիս ալդ օրգանների ալս և այն հիւանդութեան դարդացման:

Աւելի վատնդաւոր են հետեանքները, եթէ զործածվող օղին, զինին, զարեցուրը կամ ուրիշ որևէ ոգելից ըմպելիքն ոչ բաւական թարմ են:

Նոյնպէս վնասակար աղղում է ստամոքսի վրայ մէծ քանակութեամբ—կծու համեմների—պղպեղի, խրէնի, մանանեխի զործածութիւնը:

Ճէշդն ասելով, բոլորովին առողջ ստամոքսը  
պէտք չունի այդպիսի նիւթերի, նրանք աւելորդ  
և նրա համար:

Ահա այդ պատճառները, որոնք կարող են  
առաջ բերել ստամոքսի կատարը:

Սակայն յանախ ստամոքսի կատարը առաջ  
է գալիս նրանից, որ մեր մարմնում լինում է, մի  
այլ հիւանդութիւն, որը խանդարում է ստամոք-  
սային հիւթի արաւաթորութիւնը և արգելք է լի-  
նում սննդի կանոնաւոր վերամշակման ստամոքսի  
մէջ:

Այդ կատարըները հանդիսանում են, հետեւա-  
բար, իրեւ ուրիշ հիւանդութիւնների ուզեկիցներ  
մեր մարմնի մէջ, նրանք զրա համար և կոչում  
են ստամոքսի երկրորդական կատարըներ:

Յանախ նրանք նկատւում են լեարզի, սրաի  
և թոքերի հիւանդութեան ժամանակ:

Չը պահպանելով բոլոր այդ զէպքերում վերո-  
վիշեալ պայմանները սննդի և նրա զործածութեան  
մասին, մենք կարող ենք նոյտէս արազացնել—ստա-  
մոքսի կատարըները կամ սաստկացնել:

## ԱՏԱՄՈՔՍԻ ԿԱՏԱՐՐԻ ԱՐՑԱՅԱՅՑՈՒԹԻՒՆԵՐԻ

Ստամոքսի կատարըները—նախնական և երկրորդական։ Ստամոքսի լորձունքալին կատարը։—Ստամոքսալին հիւմի անկանոն արտաթռորութիւնը։—Մրտի գղալի տակ ծանրութիւնը և լցուածուեթիւնը ուտելուց լետոյ։—Սխորժակի բացակայութիւնը։ Լեզուի վրայ փառ կապելը։—Բիսկալը և սրտի ալրուելը։—Միրտ խառնելը և փսխնելը։ Յաւեր սրտի գղալի տակ։—Ջղալին երևոյթներ։

Ինչպէս հիմա ասացինք ստամոքսի կատարը յաճախ նկատում է, երբ մարմնի մէջ որևէ ուրիշ հիւանդութիւն լինի, սովորաբար, աւելի լուրջ, քան ստամոքսի կատարը շատ անդամ երկրորդական (հետեւողական) հիւանդութիւն է։

Ալղալիսի գէպքերի մեծամասնութեան մէջ առաջին տեղն են բունում հիմնական հիւանդութեան երեսյթները։ Նրանք այնքան խիստ են արտայալառած լինում, որ ինքն հիւանդը չի էլ կարողանում խմանալ, որ միաժամանակ տանջուում է և ստամոքսի կատարըով։

Իսկ ուրիշ գէպքերում ստամոքսի կատարը թէև ծաղմամբ երկրորդական, աղլու կերակով արտայալառած է անկանոն երեսյթների մի ամբողջ, շարքով։

Նիւանդը զալիս է բժշկի մօտ ստամոքսի կատարը բժշկելու համար, բայց բժիշկը, բննելով հիւանդին, գանում է նրա մէջ աւելի լուրջ հիւանդութիւն, օր. լեարզի հիւանդութիւն, լանախ՝ զարդացման առաջին աստիճանում: Բժշկելով այդ հիւանդական հիւանդութիւնը, բժիշկը բուժում է մի և նոյն ժամանակ և ստամոքսի կատարը:

Վերջապէս ստամոքսի կատարը կարող է արփանեակ լինել և իւր՝ ստամոքսի ուրիշ հիւանդութիւնների, օրինակ նրա բազցկեզալին ուռուցքին (բակ) ստամոքսի վերքի լայնացման և այլն:

Այդ հիւանդութիւններն աւելի լուրջ և վտանգաւոր են կեանքի համար: Ստամոքսի կատարը այդ դէպքում եթէ զոյութիւն ունենալ, երկրորդական տեղ է բռնում:

Աւրեմն ստամոքսի կատարը կարող է արտայալտուել զանազան ձեւերով և կարող է նոյնիսկ նսեմանալ ուրիշ հիւանդութիւնների առաջ:

Իսկ եթէ ստամոքսի կատարը զարդացած է առանձնապէս, այսինքն ուրիշ կողմերից բոլորովին առողջ մարզու մէջ, այն ժամանակ նրա արտայալտութիւններն աւելի որոշ են: Սակայն և այդ դէպքերում նա կարող է զանազան ձեւեր ստանալ:

Ցանախ նա արտայալտում է նրանով, որ ստամոքսի լորձաթաղանթը իր բորբոքուած զրու-

թեան պատճառով սկսում է արտաթորել սաստիկ  
քանակութեամբ լորձունք:

Լորձունքը ծածկում է հասա խաւով լորձա-  
թաղանթի ամբողջ երեսը և արգելում է ստամոք-  
սալին հիւթին մօտենալ ստամոքսի մէջ մտած սնրն-  
դին: Մնունդն այդ պատճառով սկսում է փտել և  
կազմում է վնասակար նիւթերի մի ամբողջ շարք,  
որոնք զրգուելով ստամոքսը, աւելի ևս սաստկաց-  
նում են նրա կատարքք:

Դրան կարող են միանալ նաև ստամոքսալին  
հիւթի արտաթորման խանդարումները:

Սուողչ ստամոքսալին հիւթի փոխարէն լորձա-  
թաղանթը յանախ արտաթորում է, ստամոքսի կա-  
տարքի ժամանակ, մի հիւթ որ կամ չափաղանց  
թթու է, կամ որի մէջ աղալին թթուն շատ նուազ  
է, և կամ ամենեին չէ պարունակում:

Նկատում են և այնպիսի գէպըեր, երբ ստա-  
մոքսի լորձաթաղանթը կորցնում է բոլորովին բն-  
գունակութիւնը, արտաթորել ստամոքսալին հիւթ,  
հիւանդու փոփոխութիւնների պատճառով:

Ոի քանի գէպըերում, բնգհակառակն, ստա-  
մոքսալին հիւթը շատ է արտաթորում: Այդպիսի  
խանդարումն յանախ լինում է միաժամանակ, երբ  
չափաղանց շատ թթու հիւթ է արտաթորում:

Ոչ ստկաւ անդամ ստամոքսի թաղանթը այդ-  
պիսի չափաղանց թթու ստամոքսալին հիւթ ար-

տաթորում է ոչ միայն սննդառութիւնից յետոց, այլ և անօթի ժամանակ, այսինքն ստամոքսի լորձաթաղանթը գործում է անրնդհատ զիշեր ցերեկ: Այդ մի հիւանդութիւն է, որ կոչւում է Ռէլիսմանի հիւանդութիւն, կամ ստամոքսի հիւթի ժողովն:

Այդ հիւանդութիւնը շատ տանջող է. բարեբախտաբար նա շատ քիչ է պատահում:

Յանախ պատահում են և այնպիսի գէպքեր, երբ ընդունուած սննդի համար ոչ բաւականաչափ ստամոքսալին հիւթ է արտաթորուում: Այդ վիճակը սովորաբար առաջ է գալիս, երբ այդպիսի հիւթի մէջ աղային թթուի քանակութիւնը քիչ է լինում:

Բոլոր այդ գէպքերում ստամոքսի գործունեութիւնը խանդարուումները ստամոքսի արտաթորման գործողութեան մէջ կարելի է դիտել, հասարակ աչքով կամ զինաւորուած աչքով, այսինքն մի գործիքով, որ կոչւում է միկրօսկոպ (մանրացոլց), որն հնարաւորութիւն է տալիս նկատել նոյն իսկ շատ մանր հիւանդու փոփոխութիւնները:

Եթէ չկան այդպիսի փոփոխութիւններ, ուրեմն մենք գործ ունենք ստամոքսի չղային հիւանդու փոփոխութիւնները:

դութեան հետ, որ բժշկականութեան մէջ կոչ-  
ւում է ստամոքսի նեվրօդ:

Սակայն զէպքերի մեծամասնութեան մէջ  
մենք գտնում ենք միաժամանակ և կատարրալին  
փոփոխութիւններ ստամոքսում:

Բոլոր ալդ ձեւերն առաջ են դալիս ոչ միա-  
կերպ. մի քանի զէպքերում հիւանդը դանդատ-  
ւում է զլխաւորապէս անհանոյ զգացումների մա-  
սին, ուրիշ զէպքերում առաջ են դալիս ուրիշ  
տեսակ դանդատներ:

Բայց այնուամենալնիւ բոլոր ալդ զէպքե-  
րում դանդատները քիչ թէ շատ միակերպ են:

Ամենալուրջ և մշտական դանդատը ստամոք-  
սի կատարով հիւանդացածների մօտ այն է, որ  
նրանք ծանրութիւն և լցուածութիւն են զգում  
սրափ զգալի տակ, սննդառութիւնից յետով:

Հիւանդն ընդունել է միայն մի քիչ, բոլորո-  
վին լաւառակ կերակուր, այն է մի քանի զգալ  
լաւ արգանակ կամ խմել է մի երկու զգալ կաթ  
և նա արդէն ոչ միայն կատարեալ կուշտ է իրան  
զգում, այլ և ստամոքսի մէջ ծանրութիւն:

Մինչ նրա կողքին սեղան նստած միւս ան-  
ձինք ուտում են մեծ ախորժակով ամբողջ հաշը,  
մի քանի կերակուրներից բաղկացած, և բացի  
կշտանալու հանելի զգացումից, ուրիշ ոչ մի ան-  
հանոյ զգացումն չեն կրում:

Ալիք անձինք, անշուշտ, առողջ ստամոքս ունեն: Ընդունուած սնունդը զեղեցիկ կերպով մարսում է նրանց ստամոքսում:

Ընդհակառակն, առաջին անձր, որ իսկոյն զգաց ստամոքսի ծանրութիւն, անշուշտ ենթակալ է որևէ խանդարման ստամոքսի աշխատութեան մէջ:

Եթէ այդ անհանոյ զգացումը արտալայտուում է սուր կերպով, շատ զէպքերում դա ցոյց է տալիս, որ ստամոքսի լորձաթաղանթը արտաթորել է առատօրէն լորձունք:

Մենք տեսանք արդէն, որ լորձունքի այդպիսի վերաբարազրութիւնը վնասակար կերպով է աղդում ստամոքսի աշխատութեան վրայ:

Այդպիսի մի քիչ կերակուր ընդունելուց յետոյ ստամոքսի մէջ ծանրութիւն զգացող անձինք, առհասարակ զուրկ են ախորժակից:

Հիւանդն ոչ մի հանոյք չէ զգում համեզ կերակուրը տեսնելիս, նա չէ կարող վայելել նրան, նրա համար բոլորովին միենոյն է թէ ինչ կտան նրան:

Մինչդեռ նրա զբաղմունքի ընկերները ճաշի ժամանակը մօտենալիս սկսում են քաղցածութիւն զգալ՝ նա բոլորովին անտարեր է մնում:

Վերադառնալով տուն, ճաշի ժամանակ նա բոլոր պատրաստուած կերակուրները անհամ է

դանում: Մինչպես նրա ընկերները ուտում են ճա-  
շը մեծ հաճութեամբ:

Եթէ լիշենք, որ լաւ ախորժակը նպաստում  
է շատ եռանդուն ստամոքսալին հիւթի արտա-  
թորման, այն ժամանակ հասկանալի կլինի, որ  
նրա բացակալութիւնը ընդունած սննդի վերա-  
մշակման համար շատ էլ անհետեանք չի կարող  
մնալ:

Ստամոքսի կատարրով հիւանդացողների ախոր-  
ժակը երբեմն աւելի լաւ է լինում, բան թէ հի-  
ւանդութիւնից առաջ:

Ստամոքսի կատարրով հիւանդացողներից շա-  
տերը գանդատւում են նաև լեզուի փառի վրայ,  
կապելով այդ ախորժակի բացակալութեան հետ:

Բոլորովին առողջ մարդու լեզուն կատարե-  
լապէս մաքուր է լինում: Նրա վերեխ մակերեռովթի  
վրայ, եթէ ուշադրութեամբ զիտենք, դանւում են  
անհարթութիւններ և կոշտութիւններ, մանաւանդ  
նրա ետեխ մասում, որ բժշկականութեան մէջ  
կոչւում է լեզուի արմատ:

Այդ անհարթութիւնները ներկայացնում են,  
այսպէս ասուած լեզուի պառուկները: Նրանք ներ-  
կայացնում են շօշափողական և նաշակալին օր-  
դաններ. զիտաւորապէս նրանց շնորհիւ մենք չո-  
կում ենք զանազան կերակուրները, ճաշակում ենք  
նրանց համը:

Բայց բոլոր այդ անհարթ մակերեւոյթը առողջ մարդու մօտ բոլորովին մաքուր է և կարմիր:

Ստամոքսի կատարրի ժամանակ, ընդհակառակը, աւելի յանախ լեզուն մաքուր չէ, այլ պատաժ է հաստ, գորշ, դեղնագոյն կամ շիկագոյն փառով:

Այդ երեսովիթներին կից է լինում սովորաբար և բխկալլ:

Առողջ մարդիկ սննդառութիւնից յետոյ չեն բխկում: Բխկալլ նկատում է նրանց մէջ միայն առատ կերակուր ուտելուց յետոյ, լինում է աննշան և հոտ չունի: Այդ մարդիկ ստամոքսով ըստ երեսովիթին առողջ են:

Ստամոքսի կատարրի ժամանակ բխկալլ ընդհակառակը յանախ է լինում:

Կատարրի թոյլ աստիճանների ժամանակ բխկալով դուրս են բերւում անհոտ գաղերը, յանախ միաժամանակ կերակուրի մասնիկների հետ:

Աւելի խիստ կատարրների ժամանակ դուրս եկող գաղերը զզուելի կծու հոտ ունեն, երբեմն ուղղակի նեխուած ծուի հոտ, այն պատճառով, որ ստամոքսի մէջ զարգանում է ծծմբա-ջրածին՝ սննդի փառելուց:

Հատ անդամ բխկալլ առատ է լինում և թէե նա անհանելի է, բայց հիւանդները չեն պա-

հում, որովհետեւ բխկալով թեթևութիւն են  
զգում:

Բխկալու հետ յանախ կից է լինում և սրտի  
ալրուելը: Հիւանդը, սննդառութիւնից յետով, սո-  
վորաբար 2—3 ժամից յետով զգում է, թէ սրտի  
զգալի տակ ինչ որ մի քան ծակում է. այդ զգա-  
ցումը տեսում է սովորաբար մի քանի ժամ և  
յաշտնւում սննդառութիւնից յետով:

Մի քանի դէպքերում նա առաջին տեղն է  
բռնում: Հիւանդներն ուղղակի անհնարին ցաւեր  
են զգում և աղաչում են բժշկին աղատել իրանց  
այդ վերին աստիճանի ծանր զգացումից:

Նա առաջ է դալիս սննդի փտելուց և նրա-  
նից, որ նրա մէջ զարգանում են զանազան տեսակ  
անպէաք թթուատներ:

Դրա համար է, որ սօդան լաւ և հաստա-  
տապէս օդնում է հիւանդին սրտի ալրուելուց:  
Նա չէզոքացնում է կաղմուած թթուատները և  
դրանով չնշում է սրտի ալրուել առաջ բերող  
պատճառը:

Սւելի պակաս ստամոքսի կատարբով հիւանդ-  
ները տանչում են սրտախառնութեամբ և փրս-  
խումով. այդ երեսով թները յանախ նկատում են  
ստամոքսի կատարբի ժամանակ, արբեցողների  
մօտ:

Վերեռւմ յիշուած անկանոն երեսյթների հակառակ, այդ երեսյթները—ինչպէս սրտախառնութիւն և փսխումը—ստամոքսի կատարրի հիւանդութեան ժամանակ արբեցողների մօտ առաջ են դալիս ոչ թէ սննդառութիւնից յետոյ, այլ առաւտեան, անօթի ժամանակ:

Այդ ժամանակ փսխուման հետ զուրս են թափւում ոչ թէ սննդալին նիւթեր, այլ լորձունքալին երկարաթել, ծոր տուող զանգուածներ:

Այդ զանգուածները բաղկացած են զլիսաւորապէս թուքից, որն արտաթորուելով սասափի բանակութեամբ, կլանւում է զիշերուայ ընթացքում:

Եթէ այդ փսխումը երկարատե է, փսխուած զանգուածների մէջ յայտնւում է և լեղի:

Սակայն ստամոքսի սովորական կատարրի ժամանակ թէ սրտախառնութիւնը և թէ փսխումը սակաւ է պատահում, այնպէս որ երբ հիւանդը զանգատում է փսխելու մասին, պէտք է ամենից առաջ մտածել ստամոքսի ուրիշ ցաւերի մասին:

Յաճախ ստամոքսի կատարրով հիւանդները դանդատում են, թէ սրաի զգալի տակ՝ ստամոքսի զրութեան համապատասխան փքուած է:

Այդ տեղը շօշափելիս հիւանդները դանդատում են, որ թեթե կերպով ցաւում է. իսկ եթէ կատարրը խիստ է, արդէն կերակուր ուտելլր ինքն

առաջ է բերում սաստիկ ինքնակամ ցաւեր սրտի զգալի տակ:

Այդ յանախ անտանելի ցաւերը առաջ են զալիս սովորական կերակուրն ընդունելուց մի քանի ժամանակ յետով և շարունակում են մի քանի ժամ: Եթէ համապատասխան տեղը սեղմենք, ցաւը բոլորովին չի թուլանալ, այլ ընդհակառակն, աւելի կը սաստկանալ:

Այդպիսի սաստիկ ցաւեր յանախ լինում են ստամոքսալին հիւթի չափազանց արտաթօրութիւնից:

Բոլոր այդ ժանր երեսովների ազգեցութեան տակ հիւանդները զալիս են այն եղրակացութեան, որ նրանք տանչւում են անբժշկելի հիւանդութեամբ:

Նրանց արամազրութիւնը սաստիկ փոխւում է, նրանց շարունակ հալածում է իրանց տանչող հիւանդութեան միաբը, նրանք սկսում են կասկածել իրանց ոլժերի մասին, սկսում են զգուշանալ նոյն իսկ չափաւոր ուտելուց:

Դրան միանում են նաև զլիսի պտուտ, սրտի բարախումն, զլիսի ցաւեր, չնչասպառութիւն և ուրիշ երեսովներ, որոնք հետեաբար հասցնում են հիւանդին այն մաքին, թե իրանց հիւանդութիւնը մի լուրջ հիւանդութիւն է:

Շատ հիւանդներ այդ մաքերի աղջեցութեան  
տակ զիմում են զանազան բժշկական զրբերի, որ  
լանախ զրուած են լինում յատկապէս բժիշկների  
համար:

Ի մեծ զարհուրանս իրանց նրանք համոզւում  
են, թէ այն անհանոլ զգացումները, որ անհան-  
գստացնում են իրանց, նկատում են հէնց այնպի-  
սէ լուրջ հիւանդութիւնների ժամանակ, ինչպէս  
բաղցկեղը (բակ), ստամոքսի վերը և այլն:

Այդ աւելի ևս յուսահատեցնում է նրանց:

Բայց իսկապէս այդպիսի չէ լինում: Արդարե  
ստամոքսի կատարը շատ երեսովթները յատուկ են  
և այդ օրդանի ուրիշ հիւանդութիւններին: Բայց  
վերջիններին բնորոշ են մի շարք երեսովթներ,  
որոնցով կարելի է զանազանել նրանց ստամոքսի  
կատարըից:

Ես կխօսեմ նոյնպէս մի բանի ուրիշ հիւան-  
դութիւնների մասին, որպէսզի ցոյց տամ, թէ  
ալճան էլ հեշտ չէ ճանաչել ստամոքսի կատարը,  
ինչպէս կարծում էր, երբ զիմում էր բժշկական  
զրբին:

Այսուեղ հարկաւոր է պիտնական մեծ հմտու-  
թիւն, ինչպէս և ուրիշ հիւանդութիւն որոշելու  
համար:

## ԶՂԱՅԻՆ ԴԻՍՊԵՊԱՒԱԾ.

Զղային դժուարամարտութեան (զիսպէպսիա) գանազանութիւնը  
ստամոքսի կտտարրից: — Ստամոքսալին հիմքի հետազօտու-  
թիւնը:

Ստամոքսի տարածուած հիւանդութիւններից,  
իր արտայայտութիւններով, ամենից շատ մօտե-  
նում է կատարրին ալսպէս կոչուած չղային գիս-  
պէպսիան (դժուարամարտութիւնը):

Այս հիւանդութիւնը նոյնչափ յաճախ է պա-  
տահում, ինչպէս և ստամոքսի կատարրը: Երկու  
հիւանդութիւնները ևս նոյն խոկ յաճախ միաժա-  
մանակ են լինում և մենոյն հիւանդի մօտ:

Չղային զիսպէպսիայի ժամանակ, հիւանդները  
նոյնպէս զանգատւում են, որ սրտի զգալի տակ  
ճնշողութիւն և ծանրութիւն են զգում սննդա-  
ռութիւնից յետոյ, որ ախորժակ չունեն, արծա-  
կում են զավեր, շատ անզամ առանց հոտի և յա-  
ճախ սրտի ալրումն են զգում: Սրտախառնութիւնը  
և փսխումը այդ հիւանդութեան ժամանակ աւելի  
յաճախ են պատահում, քան ստամոքսի կատարրի  
ժամանակ:

Յաւերը որտի զգալի տակ այսաեղ նոյնչափ սովորական են, ինչպէս և ստամոքսի կատարրի ժամանակ: Մի խօսքով, բոլոր այն անհանոյ զգացողութիւնները, որոնք ուղեկից են ստամոքսի կատարրին, նկատւում են և չղալին դիսպէսսիալի ժամանակ:

Եւ սակայն խիստ կարեոր է զանազանել այդ հիւանդութիւնները, որովհեաւ նրանց բժշկութիւնը բոլորովին տարբեր է:

Բարեբազզաբար, լաւ արտայալառուած դէպէրում, այդ երկու հիւանդութիւնների մէջ շատ մեծ տարբերութիւն կայ:

Ճիշտ է, անհանոյ զգացողութիւնները նոյնն են, բայց ինչ վերաբերում է այդ երկու հիւանդութիւնների երեսիթներին, այդտեղ ուղղակի հակազրութէւն կայ:

Ստամոքսի կատարրի ժամանակ բոլոր վերոիշեալ երեսիթները յայտնւում են ճիշտ ամեն մի սննդառութիւնից յետոյ. անօթի ժամանակ ստամոքսի կատարրով հիւանդը իոտան լաւ է զգում:

Բայց հէնց որ նա մի ըիչ բան է ուառում, նա իսկոյն զգում է սրտի զգալի տակ ծանրութիւն, բխկալ, սրտի ալրուել, ցաւեր՝ սրտի զգալի շրջանում, լեզուն զրեթէ միշտ ծածկուած է փառով:

Ուրիշ բան է չղալին դիսպէսսիալով հիւանդը:

Զանազանութիւնը ամենից լաւ է բայատրեմ օրինակով:

Ենթազրենք, որ զուք հիւանդացել էք չղալին զիսպէպսիալով: Դուք երկար զբազուել էք. զբազմունքի ժամանակ ձեզ հետ ինչ որ անհանոյ բան է պատահել: Դուք վերագառնում էք տուն զրժգոհ, սրանեղած: Այստեղ արգէն բնտանիքը ձեղ սպասում է ճաշի՝ ձեր սիրած կերակուրներով. ճաշը պատրաստուած է համեղ և լաւ:

Դուք սեղան էք նստում, բալց մի տեսակ զզուանք էք զզում զէպի ձեր սովորական սիրեցեալ կերակուրները և զուք ոչ մի ախորժակ չէք զզում:

Բալց զուք զօռ էք անում ձեզ, որպէսպի տնեցիները չկարծեն, թէ ճաշը վաս է պատրաստուած:

Հաղիւ մի կամ երկու զդալ համեղ արգանակ էք կուլ տալիս, խկոյն զզում էք ծանրութիւն սրափ զդալի տակ: Բալց զուք զարծեալ ուտում էք էլի մի փոքր բան: Ամեն բան թարմ, լաւ և լաւառակ է:

Չնալելով զրան, ծանրութեան զդացողութիւնը սրափ զդալի տակ ձեզ չէ թողնում. ձեր զրութիւնը, բնդհակառակը, վատթարանում է, զուք զզում էք ինչ որ մի զզուելի համ բերանում, զուք բխկում էք, երեմն և փախում:

Մինչդեռ լեզուն սովորաբար մնում է բոլորովին մաքուր և չը ժածկուած փառով:

Բայց ահա ձեզ մօտ գալիս են ձեր բարեկամները: Նրանց հետ զուք խօսակցութեան էք բոնրւում, նրանք փարատում են ձեր թախծութիւնը և զուք բոլորովին մոռանում էք ձեզ պատահած տհանութիւնը, կամ համողւում էք, որ բոլորովին զուք տեղ այնպէս սաստիկ սրանեղուել էք:

Ձեր հոգու սովորական տրամադրութիւնը վերադառնում է: Ձեղ հրաւիրում են երեկոյեան թէլին:

Դուք հանութեամբ մասնակցում էք, զուք նոյն իսկ չէք նկատում, որ ձեր ախորժակը բացւել է և զուք մեծ հանութեամբ ուտում էք բաւականին շատ:

Ճաշի ժամանակ զուք հաղիւ կերել էիք մի երկու զդալ լաւ արգանակ, իսկ այժմ զուք ամենամեծ հանութեամբ ուտում էք մի լաւ բաժին բիֆշտեկս կամ բօստրիֆ: Եւ բացի վայելքի հանելի զգացողութիւնից, զուք ոչինչ չէք զգում:

Այժմ ընթերցող, զուք տեսնում էք, որ թէ ստամոքսի կատարը, թէ չղալին դիսպէպսիան բնաբոշւում են միենոյն հիւանդու երեսովներով, բայց նրանց երեման ժամանակի մէջ ահազին տարբերութիւն կալ:

Ստամոքսի կատարի ժամանակ բոլոր այդ երեսովները մշտական են, նրանք երեսում են ամեն

անդամ, երբ հիւանդը որևէ է սնունդ է ընդունում.  
որքան աւելի կոշտ է այդ սնունդը, նոյն չափ  
խիստ կերպով են արտայալաւում այդ երեսովթները:

Սննդառութիւնից առաջ հիւանդը իրան լաւ  
է զգում:

Ուրիշ բան է ներկայացնում չղալին զիսպեպ-  
սիալով հիւանդը: Նրա մօտ ամեն բան կախուած  
է նրա ընդհանուր տրամադրութիւնից:

Երբ նա լաւ արամադրութեան մէջ է, նա  
ամեն բան տանում է շատ լաւ, նոյն իսկ գժուա-  
րամարս կերակուրները, օրինակ իւղալի կերակուրը:  
Բայց հէնց որ նա սրանեղում է, նա արգէն կրում  
է բոլոր անհանելի զգացողութիւնները. նոյն իսկ  
եթէ ընդունել է փոքր ինչ անմարսական կերակուր,  
ինչպէս արգանակ, կաթ և աղն:

Եթէ նա սասափիկ լուղուած է, այդ անհանոյ  
զգացողութիւնները երեսում են նրա մէջ ոչ միայն  
սննդառութիւնից չետոյ, ինչ աեսակի և լինի նա,  
այլ յանախ և անօթի փորով, ինչ որ սովորաբար  
չէ պատահում ստամոքսի կատարրի ժամանակ:

Այդ տարբերութեան պատճառը այդ երկու  
հիւանդութիւնների էութիւնն է:

Մէնք աեսանք, որ ստամոքսի կատարրի ժա-  
մանակ, նրա լորձաթաղանթը բորբոքիչ փոփոխու-  
թիւններ է կրում:

Այդ փոփոխութիւնները առաջ են բերում կամ

լործունքի արտաթորութիւն մեծ բանակութեամբ,  
կամ խանդարում են կանոնաւոր ստամոքսի հիւթի  
արտաթորութեանը:

Այդ խանդարումը լործաթաղանթի բաժան-  
մունքի մէջ մշտական է, նա ուղեկից է ամեն մի  
անդառութեան:

Այդուեղից և այն անհանոլ զգացողութիւն-  
ների մշտատեսութիւնը, սրանք կից են ստամոքսի  
ամեն մի կատարըին և ցոյց են տալիս թէ սննդի  
մարսողութիւնը ստամոքսում խանդարուած է:

Զդալին զիսպէպսիալի ժամանակ, ընդհակա-  
ռակը, լործաթաղանթը դործում է կանոնաւորապէս:

Արտաթորուող հիւթը իւր սովորական բազա-  
գրութիւնը ունի, իսկ մարսողութեան խանդարումը  
ստամոքսում, այստեղ կախուած է բնականաբար  
չզալին աղգեցութիւններից, ուրիշ խօսքերով, չզա-  
լին զիսպէպսիան ստամոքսի նեվրօզն է:

Հասկանալի է, ուրեմն, որ անհանոլ զգացո-  
ղութիւնները երեսում են միայն այն ժամանակ,  
երբ չզալին աղգեցութիւնները իրանց զգաց-  
նել են տալիս:

Իսկ իրանց զգացնել տալ նրանք կարող են  
օրուայ զանազան ժամանակ, բոլորովին անկախ  
անդառութիւնից:

Այժմ, ընթերցող, դուք հեշտ կը հասկանաք,  
որ չզալին զիսպէպսիան յանախ պէտք է նկատուի

այն անձանց մօտ, որոնք բայցայուած, անկայուն չղալին սիստեմ ունեն:

Եւ իրօք այդպէս էլ լինում է: Դա, զլխաւուրապէս, չղագարների (նեվրաստենիկների) հիւանդութիւնն է, այսինքն այն մարդկանց, որոնք դիւրագրգիռ են և որոնց չղալին սիստեմը հեշտութեամբ է լուզւում:

Մեր չղալին դարում այդպիսի մարդիկ շատ կան, մանաւանդ ինտելիգենտ անձանց մէջ:

Նրանց գուշը հեշտութեամբ կարող էք ճանաչել. զրանք ի թիւս այլոց, այն անձինքն են, որոնք չերմ կերպով կալչում են մի գործի, բայց շուտով և սառչում են, նրանց արիութիւնը տոկուն չէ և նրանք չեն կարողանում գործը մինչեւ վերջը տանել. նրանց չղալին սիստեմը արագ սպառւում է:

Այդ մարդիկ լիշեցնում են վառօղը, որ ամենափոքր զարկից բռնկւում է, բայց իսկովն և հանգչում:

Այդպիսի մարդկանց մօտ չղալին դիսպէսսիան նկատում է լանախ: Եւ լիրաւի, չղալին դիսպէսպսիալսիալի հիւանդները լայտանում են սովորաբար դանդատների մի ամբողջ շարք, որոնք վերաբերում են բացառապէս չղալին սիստեմին:

Ոմանք դանդատում են թէ շնչառառ են լինում, սրաի բարախումն, զլխի ծանրութիւն, զլխապտոյա, զլխացաւ ունին, ականջների մէջ

խշխշում է, աչքերի տռաջ կայծեր են երևում.  
նրանց հոգու տրամադրութիւնը յանախ լինում է  
ճնշուած, մռայլ:

Նրանց քունը կամ անհանդիստ է լինում,  
յուղալից կամ ընդհակառակը, նրանք դանդաս-  
ւում են շարունակ ընէածութեան մասին:

Բայց, դուք, ընթերցող, լաւ անցկացրած զի-  
շերից յետով, զգում էք ձեղ առոյգ, կենսուրախ,  
իսկ այն հիւանդը, ընդհակառակը, զգում է ընդ-  
հանուր շարդուածութիւն. նա թէև շատ է ընել,  
բայց քունը չէ առել:

Միայն հետղհետէ, կէսօրուայ կամ երեկոյեան  
մօտերը, նա վրայ է դալիս և իրան առոյգ է  
զգում: Նա տհանութեամբ դործ է սկսում, որով-  
հետեւ ամեն մի դործ յոդնեցնում է նրան:

Աշխատութիւնը ալդ պատճառով զլուխ չէ  
զալիս նրա ձեռքին: Այդպէս է նա՝ ով հիւանդ է  
իսկական չղային դիսպէպսիալով:

Այժմ դուք տեսնում էք, որ այդ աեսակ հի-  
ւանդի և ստամոքսի կատարով հիւանդի մէջ մեծ  
տարբերութիւն կայ: Ի հարկէ, այդպիսի խիստ  
կերպով արտայալառուած դէպքերում այդ երկու  
հիւանդութիւնները իմանալ զժուար չէ:

Բայց միշտ այդպէս չէ լինում:

Ես արդէն ասացի, որ այդ երկու հիւանդու-

թիւնները յանախ միաժամանակ դոլութիւն են  
ունենում միւնոյն հիւանդի մօտ:

Ուրիշ դէպքերում չղալին դիսպէպսիան այն-  
քան լաւ չէ արտայալառուած և չէ ներկայացնում  
այնպիսի որոշ տիպ, ինչպիսին նկարագրեցի:

Այդպիսի դէպքերում հիւանդութեան ճանա-  
չելը աւելի դժուար է:

Յանախ ալսաեղ մեղ օգնում է ստամոքսալին  
հիւթի հետազօտութիւնը: Ինչպէս արգէն ասուած  
է, չղալին դիսպէպսիալի ժամանակ ստամոքսալին  
հիւթը բոլորովին կանոնաւոր է, իսկ ստամոքսի  
կատարրի ժամանակ նա շեղւում է կանոնաւորից  
բատ կազմութեան:

Այդ հետազօտութիւնը բնդհանուր առմամբ  
ալսպէս է կատարւում: Հիւանդին առաւօտեան  
անօթի, տալիս են խմելու մի բաժակ պարզ թէ՝  
առանց շաքարի, և նրա հետ հասարակ ֆրանսիա-  
կան 5 - կոպէկանոց բուլկու <sup>1/3</sup> մասը:

Մի ժամ անցնելուց յետոյ մտցնում են ստա-  
մոքսը, բերանով, մի ոչ այնքան հաստ բետինէ  
խողովակ, որ երկու ծակ ունի այն ծալրում, որը  
մտնում է ստամոքսի մէջ: Այդ խողովակը կոչւում  
է բժշկականութեան մէջ ստամոքսալին խորաչափ  
(զօնդ):

Այդ խողովակի բերանալին ծալրը միացնում  
են մի դորձիքի հետ, որով դուրս են մձւում ստա-

մոքսի պարունակութիւնը։ Ապա այդ պարունակութիւնը ենթարկում են քիմիական և մանրադնական (միկրօսկոպիական) հետազոտութեան։

Այդպիսի հետազոտութիւնը շատ կարեոր նշանակութիւն ունի։ Նա հնարաւորութիւն է տալիս չոկել չղալին դիսպեպսիան ստամոքսի կատարելից։

Իսկ այդ շատ կարեոր է, որովհետեւ այդ հիւսնգութիւնների բժշկութիւնը բոլորովին տարբեր է։ Ահա ինչի համար երբէք չպէտք է զանց առնել այդ հետազոտութիւնը։

Շատ հիւսնգներ ուղղակի մերժում են կուլտալ ստամոքսալին խորաչափը, զգուելով կամ վախենալով որ չխեղզուեն։

Ի հարկէ նրանք իրաւացի չեն դատում. խորաչափն աւելի հաստ չէ այն կերակրի պատառից, որ ամեն օր կուլ են տալիս, այնպէս որ խեղդուելու վախը բոլորովին անհիմն է։

Մինչդեռ այդ հետազոտութիւնը հնարաւորութիւն է տալիս բժշկին կանոնաւոր բժշկութիւն նշանակել, ուրեմն և բժշկել հիւսնգին։

ՍՏԱՄՈՔՍԱՅԻՆ ՄԻ ՔԸՆԻ ՈՒՐԻՇ ՀԻՒԱՆԴՈՒ-  
ԹԻՒՆՆԵՐԸ

Ստամոքսային ցաւ—գաստրալգիա:—Զդային փսխումն:—Ստա-  
մոքսային կրիզներ ողնային հիւծախտաւորների (տաքեղիկների)  
մօտ \*):

Ստամոքսային հիւթի հետազօտութիւնը հնա-  
րաւորութիւն է տալիս դանաղանել ստամոքսի  
կատարրից և ուրիշ համանման հիւանդութիւններ,  
օրինակ, այսպէս կոչուած «ստամոքսի նեվրօդ-  
ները»:

Այս խօսքով, ինչպէս արդէն ասացի, հասկաց-  
ւում է ստամոքսի բոլոր այնպիսի հիւանդութիւն-  
ները, որոնց ժամանակ ստամոքսի լորձաթաղանթը  
հանդիսանում է բոլորովին կանոնաւոր, առողջ,  
բայց չնայելով զրան, հիւանդը ունենում է այս  
կամ այն անհանոլ զգացողութիւնները ստամոքսի  
կողմից:

Այդպիսի նեվրօդների օրինակ կարող է ծա-  
ռայել մեր հենց այժմ նկարազրած չզային զիս-  
պէպսիան: Դա ստամոքսի ամենայանախ և տա-  
րածուած նեվրօդն է:

\* ) Տես բժ. Խուզուղեան «Ուղեղի սիֆիլիսը»:

Բայց կան ստամոքսի և ուրիշ նեվրօղներ:

Արանց մէջ համեմատաբար աւելի յանախ նկատում է այն նեվրօղը, որ յայտնուում է սաստիկ ցաւերով սրտագլալի տակ, և այդ ցաւերը երեւան են դալիս սովորաբար անօթի ժամանակ: Այդ նեվրօղը կոչում է զաստրալգիա—ստամոքսային ցաւ:

Այդ զաստրալգիական ցաւերը դանաղանում են ստամոքսի կատարրից նրանով, որ նուազում են սննդառութիւնից յետով, կամ երբ ճնշում են մատով սրտագլալային շրջանը:

Այդ լինում է, ի հարկէ, միայն այն դէպքում, երբ զոյութիւն ունի սոսկ դաստրալգիա առանց ստամոքսի կատարրի:

Ստամոքսի այդ բաւական յանախ պատահող նեվրօղը ամենից շատ նկատում է երիտասարդ աղջիկների այն սակաւարիւնութեան ժամանակ, որ կոչում է «դրակոնի անկարողութիւն» (խլօրող):

Դաստրալգիայով տանջուողները շատ անգամ ներկայացնում են և ուրիշ անկանոն երեսութներ՝ մի շարք չղալին սիստեմի կողմից, հիստերիալի կամ նեվրաստենալի (չղագարութեան) ձեռք:

Երեմն առաջ է դալիս մարմնի ուրիշ օրգանների, և ամենից յանախ, իգական սեռական օրգանների ցաւերից:

Գաստրալգիական ցաւերը կարող էն կից լինել և ուրիշ անկանոն երեսլթների հետ ստամոքսի կողմից, որոնք կարող են նկատուել և անկախորէն:

Այսպէս, մի քանի դէպքերում յանախ նկատում էն ջղալին փսխումներ բոլորովին առողջ ստամոքս ունեցող մարդկանց մօտ:

Այդպիսի մարդկանց մօտ, պարբերաբար, բատմէծի մասին առանց որևէ յուզմունքի, տհանութեան ազգեցութեան ներքոյ, կամ երբեմն առանց որոշ պատճառի, յանկարծ երեսում է անզսպելի փսխումն:

Նախ և առաջ փսխումով գուրս են զալիս ստամոքսից սննդալին նիւթեր, իսկ յետոյ լորձունք և լեղի: Փսխումք սակայն կարող է երեալ և անօթի փորին:

Մտամոքսի կատարքից ալդ փսխումք տարբերում է նրանով, որ նրանից առաջ չեն լինում սովորաբար սրտախառնութիւն և ուշբանց գնալը:

Ջղալին փսխման դարձը կարող է շարունակել մի քանի ժամ, կամ օր, կամ նոյն իսկ շաբաթ և յետոյ անցնել:

Մի քանի ժամանակ անցնելուց յետոյ ևս դարձեալ կրկնում է:

Աւելի սասարիկ է այն ստամոքսալին նեփրօղը,

որին ուղեկցում է շատ անգամ այսպէս կոչուած ողնալին հիւծախար կամ տաբեսը:

Վերջինս ներկայացնում է ողնալին ուղեղի հիւանդութիւն, որ զարգանում է զիխաւորապէս հին սիֆիլիս ունեցողների մօտ, անկանոն բժշկուած:

Այդ հիւանդութեան ժամանակ յանախ նկատ-  
ւում է սասամոքսի կողմից անկանոն երեսլթների  
բնորոշ շարք, որն տաղանդաւոր չղագէտ ֆրան-  
սիական պրօֆէսօր Շարկօն անուանել է «սաս-  
մոքսալին կրիզներ» (crises gastrigues):

Եւ ճիշդ, տաբետիկների մօտ երբեմնակի յայ-  
տնւում են սրտի դգալի տակ սաստիկ ցաւեր և  
փսխումն: Թէ ցաւերը և թէ փսխումը տեղի չեն  
տալիս կամ քիչ են տեղի տալիս բժշկական միջա-  
մառութեան:

Նրանք տանջում են հիւանդին, անգագար  
մի քանի օրուայ, նոյն իսկ շաբաթուայ ընթաց-  
քում, հասցնելով նրան յուսահատութեան, ապա  
անհետանում են. բայց մի քանի ժամանակից յե-  
տույ դարձեալ երեան են դալիս:

Բոլոր այդ գէպքերում հիւանդութիւնը կա-  
նոնաւորապէս նանաչելը շատ կարեոր է, որովհե-  
տեւ, եթէ այդ ներօգները բժշկեն՝ իբրև ստամոք-  
սի կատարը, հիւանդը ոչ մի օգուտ չի ստանայ,  
այլ ընդհակառակը, կորած կլինի հարկաւոր ժա-  
մանակը բժշկութեան համար:

Ստամոքսալին հիւթի հետազօտութիւնը շատ  
դէպքերում ցոյց կտալ բժշկին, թէ ինչի հետ գործ  
ունի և զրանով կառաջնորդէ նրա բժշկութիւնը  
ուղիղ ճանապարհով:

Ուրեմն՝ Եթէ բժիշկը հարկաւոր է համարում.  
հետազօտել ստամոքսալին հիւթը, հիւանդը չպէտք  
է մերժէ, նա պէտք է անմիջապէս ցոյց տալ իր  
կատարեալ համաձայնութիւնը և զրանով օդնէ,  
բժշկին՝ հիւանդութիւնը ճանաչելու:

Ճիշդ է ստամոքսալին այդ նեվրօգներից մի  
բանիսը կցւում են այնպիսի երեսլթների հետ,  
որոնք իսկոյն հասկանալի են զարծնում հիւանդու-  
թիւնը և առանց ստամոքսալին հիւթի հետազօ-  
տութեան:

Այսպէս, օրինակ, ողնալին հիւժախար ներ-  
կալացնում է մի շարք այնպիսի բնորոշ երեսլթ-  
ներ, որ գժուար չէ ճանաչել ստամոքսալին կրիդ-  
ները և առանց ստամոքսալին հիւթի հետազօտու-  
թեան:

Բայց այդպէս լինում է միայն ողնալին հիւժ-  
ախտի արգէն զարգացած դէպքերում:

Սակայն շատ սակաւ ստամոքսալին կրիդները  
ներկալացնում են ողնալին հիւժախտի առաջին  
հիւանդու երեսլթը. նրա ուրիշ արտակայտու-  
թիւնները դեռ չկան:

Ալդպիսի դէսղըում կրիզների ճանաչելը աւելի գժուարին է, մինչ ալդ կարեսը է, որովհետեւ ողնալին հիւծախտի բժշկութիւնք աւելի շուտ կարող է սկսուել՝ երբ ճիշդ ճանաչուի հիւանդութիւնը:

Ալժմ ընթերցող, զուք համոզուեցիք, որ ճանաչել ստամոքսի կատարը այնքան էլ հեշտ չէ այն անձանց համար, որոնք չեն զբաղւում բժշկականութեամբ:

Դուք համոզուեցիք, որ զբա համար պահանջւում է մեծ զիառութիւն, պահանջւում է հիւանդութեան բոլոր նշանների՝ մանաւանդ չզալին սիստեմի մանրակրկիտ հետազօտութիւն, պահանջւում է, վերջապէս, երբեմն և ստամոքսալին հիւթի հետազօտութիւնը:

---

ՄԵԶԻ ԵՒ ԿՂԿՂԱՆՔԻ ՀԵՑԱԶՈՏՈՒԹԻՒՆԸ ՍՏԱ-  
ՄՈՔՍԻ ԿԱՏԱՐՐԻ ԺԱՄԱՆԱԿ

Սակայն բժիշկը չէ կարող բաւականանալ  
միայն հիւանդի և նրա ստամոքսալին հիւթի հե-  
տազօտութեամբ:

Շատ գեպքերում նա սախալուած է լինում  
մանրակրկիտ կերպով հետազօտել նաև մէզը և  
կղկղանքը, իսկ երբեմն և արիւնը:

Որքան էլ ձեղ տարօրինակ թուէ ալդ, բայց  
ալգալիսի հետազօտութիւնները անհրաժեշտ են:

Որովհետեւ մէզի հետազօտութիւնը հնարաւո-  
րութիւն է տալիս բժշկին, լուծել այն հարցը,  
արգեօք հիւանդը չունի երիկամունքների հիւան-  
դութիւն, որից կարող է կախուած լինել ստամոք-  
սի կատարը կամ այն անկանոն երեսով թները, որն  
հիւանդը կրում է ստամոքսի կողմից:

Ալդ կարեոր է, որովհետեւ եթէ ալգալիսի  
կապ կայ, հարկաւոր է բժշկել երիկամունքների  
հիւանդութիւնը: Միայն ալդ պայմանում հիւանդը  
կարող է ազատուել իրան տանջող երեսով թներից:

Մանաւանդ ստամոքսալին երեսով թներից յա-  
նախ ընկերանում է երիկամունքների հիւանդու-  
թիւններին փսխումը:

Նրա երեւալը երիկամունքների բորբոքման  
ժամանակ կարեռը է իմանալ իր ժամանակին,  
որովհետեւ նա ցոյց է տալիս, որ սասափի փոփո-  
խութիւններ կան հիւանդի մարմնի մէջ:

Եթէ չհետազօտեն մէզը և զրանով չբացա-  
տրեն, որ այդ փսխող պատճառը երիկամունքների  
հիւանդութիւնն է, հիւանդը կարող է զրկուել  
կեանքից:

Այսաեղ հարկաւոր են եռանդուն միջոյներ՝  
երիկամունքների բժշկութեան համար և ոչ ամե-  
նեին ստամոքսի կատարը սովորական բժշկու-  
թիւնը, որ հիւանդին ոչ մի օգուտ չի բերի:

Նոյնպէս կարեռը է կղկղանքի հետազօտու-  
թիւնը:

Նրանց մէջ շատ անզամ, ստամոքսի հիւան-  
դութիւնների գանդատների ժամանակ դանւում են  
այնպիսի նշաններ, որոնք ցոյց են տալիս թէ հի-  
ւանդի աղիքների մէջ ննուններ կան:

Ճճուները զրգուելով աղիքները, կարող են  
առաջ բերել այդ անկանոն ստամոքսալիին երե-  
սիթները: Որքան էլ մենք բժշկենք նրանց, բայց  
մինչեւ որ չհեռացնենք ճճուներին՝ հիւանդը չի  
աղատուի իր տանջանքներից:

Մի խօսքով, երբ բժիշկը դանւում է, որ զուք  
ստամոքսի կատարը ունէք, նա իր մաքում լու-  
ծում է մի դժուարին խնդիր:

Դուք երբէք չպէտք է խանգարէք նրան լու-  
ծելու այդ խնդիրը. բնդհակառակը աշխատեցէք  
նրան օգնել:

Այդ պատճառով որքան էլ ձեղ անպէտք  
թուան բժշկի հարցերը և պահանջները, կատարե-  
ցէք նրանց հաճութեամբ: Մի մտածէք, որ բժիշկը  
այդ ամենը զուք տեղն է ասում: Ամեն մի բժշկին  
հաճելի է տեսնել որ դուք՝ հաւատացած լինելով  
նրան ձեր առողջութիւնը, շուտով առողջանաք:  
Դրա մէջն է նրա արած ծառայութիւնը. առ այդ  
ուղղուած են բոլոր նրա ջանքերը և աշխատու-  
թիւնը:

Մի մոռանաք ապա, որ բժշկին հարկաւոր է  
ի նկատի առնել աւելի շատ մեծ թիւ հիւանդու-  
թիւնների, քան ես վերեռում լիշեցի և այդ մեծ  
թուից նա պէտք է դէն ձգէ ամենը և կանգ առնէ  
մէկի վրայ:

Ուրեմն մի կարծէք, որ ստամոքսի կատարը  
ճանաչելը այնքան էլ հեշտ է, ինչպէս կարծում էք  
մինչեւ այժմ:

Է.

ԱՏԱՄՈՔՍԻ ԿԱՏԱՐՐԻ ԲՆԹԱՑՔԸ

Սուր և քրօնիկական կատարք:—Ակդրնական և երկրորդական կատարքի ընթացքը:

Ես արգէն մի քանի անդամ ասացի, որ ստամոքսի կատարքը կարող է լինել կամ ուրիշ կողմէրից բոլորովին առողջ մարգկանց մօտ, այսինքն կարող է լինել, ինչպէս առում են բժշկականութեան մէջ, սկզբնական, կամ թէ նա կարող է կցուած լինել մի ուրիշ աւելի լուրջ հիւանդութեան, այսինքն կարող է լինել երկրորդական:

Թէ առաջին և թէ երկրորդ ձեր կարող են շատ խիստ կերպով արտայալառուել, այսինքն բնդանալ կամ սուր կերպով, կամ եթէ ոչ սուր, բայց անցնել շատ դանդաղաբար. վերջին ձեր կոչւում է քրօնիկական:

Քրօնիկական կատարքը ժամանակ առ ժամանակ կարող է սաստկանալ՝ սուր կերպարանք ընդունելով: Սուր կատարքը, երբ ժուժկալութիւն (փահրիդ) են պահպանում շատ շուտ է անցնում:

Ինչ վերաբերում է քրօնիկական կատարքին, պէտք է իմանալ, որ երկրորդական կատարք եղած ժամանակ, ամեն բան կախուած է այն հիմնական

հիւանդութիւնից, որ առաջ է բերել ստամոքսի կատարրը, այդ հիւանդութեան աեսակից է կախւած կատարրի բժշկելիութիւնը կամ անբժշկելիութիւնը և նրա երկարատեսութիւնը:

Ազգբնական կատարրը, որ թողնուած է առանց բժշկուելու, սաստկանում է և հետզհետէ կարող է առաջ բերել աղիքների կամ լեարդի, երիկամունքների և ուրիշ հարեւան օրդանների կտամարրի գարգացումն:

Այլպիսի կատարրը երեւան է գալիս արդէն ոչ դուտ, այլ բարդուած նոր աւելի լուրջ հիւանդութիւններով, որոնք գժուարութեամբ ևն աեղի տալիս բժշկութիւնը:

Այդ պատճառով, հէնց որ ստամոքսի կողմից նկատւում են անկանոն երեսյթներ, իսկոյն զիմեցեք բժշկին՝ չետաձգելով բժշկութիւնը, քանի որ կատարրը չէ սաստկացել:

Քանի որ նա թեթև ծեւ ունի նա բժշկում է բոլորովին, համեմատաբար շատ կարճ ժամանակում,

Բնդհակառակը, ստամոքսի երկարատե կտամարրը յամառ է, պահանջում է բժշկութեան համար մի քանի տարիներ. բայց երբեմն զառնում է անբուժելի. բժշկութիւնը վերջին զէպքում միայն թեթեացնում է հիւանդին, բայց բոլորովին չէ աղատում կատարրից:

ԱՏԱՄՈՔՍԻ ԿՈՑԱՐՐԻ ՆԱԽԱՊԱՀԵՍՏԱԼԻ-  
ԹԻՒՆԸ (ՊՐՕՖԻԼԱԿՑԻԿԱՆ):

Մննդալին բեժիմը:—Բերանի խոռոչի առողջապահումիւնը:—  
Հեղուկենքի գործածումիւնը ձաշի ժամանակ:—Կէս օրից լետոյ  
քունը:

Այժմ երբ զուք ծանօթացաք ստամոքսի կա-  
կարրի էութեան, նրա արտայալառութիւնների և  
այն պատճառների հետ, որոնք առաջ են բերում  
նրա զարգացումը. Ես կհրաւիրեմ ձեր ուշադրու-  
թիւնը նախապահեստեան (պրօֆիլակտիկալի)  
վրայ, ալսինքն այն միջոցների վրայ, որոնց պահ-  
պանութեամբ զուք չէք ենթարկուի կատարրի հի-  
ւանդութեան:

Բնական է, որ զրա համար պէտք է խոյս  
տալ այն բոլորից, ինչ որ կարող է առաջ բերել  
ստամոքսի կատարր, որի մասին մանրամասն խօ-  
սեցի երկրորդ զիխում: Ես միանդամ ես համառօ-  
տաբար կցիշեցնեմ ձեղ:

Ամենից առաջ զուք պարտաւոր էք վարել  
կանոնաւոր կեանք կերակուր ընդունելու ժամա-  
նակի վերաբերմամբ, ալսինքն ամեն օր կերակուր  
ընդունել որոշ ժամերում:

Սեղան նստելիս նաշելու համար, դուք պարաւաւոր էք հոգս տանել ձեր ձեռների մաքրութեան մասին:

Կերակուք պէտք է բնդունել օրական մի քանի անդամ, զոնէ Յ անդամ, ամեն անդամ քիչ-քիչ, այնպէս որ ուտելուց յեաոյ ձեզ շատ կուշտ չզգաք, կամ ինչպէս ասում են՝ ձեր փորր փրուած չըդգոր:

Կերակուրք չպէտք է դժուարամարս լինի, օրինակ, չպէտք է պարունակէ շատ ճարպալին նիւթեր:

Կերակուրք պէտք է բոլորովին թարմ լինի, լաւառակ: Պէտք է նրան լաւ ծամել բերանի խոռոչում. երբէք չպէտք է շտապով ուտել:

Խոյս տուէք ամեն տեսակ ողելից բմպելիք-ներից. լինի օդի, թէ զինի, կամ զարեցուք, մանաւանդ երբ նրանք լաւառակ չեն:

Խոյս տուէք նաև սուր նախառուտելիքների (զակուսկաների) և սուր համեմների՝ պղպեղի, խրէնի, մանանէխի գործածութիւնից:

Հսկեցէք բերանի խոռոչի վիճակի վրայ. բոլոր ասամները պէտք է տեղը լինեն, փչացած ատամները պէտք է բժշկել:

Բացի զբանից անհրաժեշտ է ամեն օր բերանը մաքրել. բերանի խոռոչը պէտք է ամեն օր լուանակ հասարակ եփ տուած չըռով. չըին, համի

համար կարելի է աւելացնել այս կամ այն աճ-  
վնաս անուշահոտ նիւթ, օրինակ մի քանի կաթիլ  
անանուխի չուր:

Բերանը պէտք է ողողել անմիջապէս ամեն  
մի սննդառութիւնից լետոյ, յամենայն դէպս օրբ  
երկու անդամ, առաւօտեան և պառկելուց առաջ:

Բացի բերանը ողողելուց հարկաւոր է ամեն  
օր խնամքով մաքրել ասամները: Ամենից լաւ է,  
զործածել գրա համար հասարակ մաքրուած կա-  
փին և ասամնալին կակուզ խոզանակ: Ճիշդ է,  
զեղատներում ծախւում են բազմաթիւ պատեն-  
տաւոր զեղեր բերանի ողողման և ասամների մաք-  
րութեան համար, բայց նրանք թանգ են և սա-  
կայն ոչ մի առաւելութիւն չունեն կաւիճից:

Կաւիճի փոշու հետ յանախ խառնում են մի  
քանի անանուխի կաթիլ հանելի համ տալու և  
բերանի խոռոչը թարմացնելու համար: Ալդակիսի  
անանուխախառն կաւնալին փոշի կարելի է զնել  
զեղալին շտեմարաններում արդէն պատրաստ, ա-  
ռանց ըէցէպտի:

Ահա զրանք են այն կանոնները, որ զուք  
պէտք է պահպանէք, որպէսզի աղատ մնաք ստա-  
մոքսի կատարրից:

Մեղ մնում է լուծել զեռ էլի 2 հարց. 1) Կա-  
րելի՞ է արդեօք խմել, օրինակ կերակուր ու-

աելու ժամանակ. 2) Կարելի՞ է արդեօք ընել հա-  
շից յետով:

Մի քանի անձինք հաշի ժամանակ շատ են  
խմում. ես այստեղ ի նկատի ունեմ ոչ թէ ոգելից  
ըմպելիքները, այլ ուրիշ հեղուկներ:

Ոմանք շատ են խմում հասարակ չուր, ոմանք  
հանքալին ջրեր, օրինակ նարզան, բորժոն, վիշի,  
զելտերեան ջուր և այլն: Օդտական է այդ թէ  
ընդհակառակը, վնասակար:

Երբ հաշին հեղուկ քիչ են խմում, արտա-  
թորուող ստամոքսալին հիւթը քիչ լուծուած է  
լինում և այդ պատճառով համեմատաբար աւելի  
ուժեղ է լինում, այսինքն աւելի գործունեալ:

Այդիսի հիւթը աւելի աղջու կերպով է  
մարսեցնում ստամոքսի մէջ ընկած սնունդը:

Ընդհակառակը, ով շատ հեղուկ է խմում, նա  
սաստիկ ջրախտոն է զարծնում ստամոքսալին  
հիւթը և այդ պատճառով այդ հիւթը աւելի քիչ  
աղջու և գործունեալ է զառնսւմ:

Ամենից լաւն այն է, որ կերակուր ուտելու  
ժամանակ հարկաւոր քանակութեամբ հեղուկ գոր-  
ծածէր:

Ճիշդ է, զրա շնորհիւ ստամոքսալին հիւթը  
մի քիչ լուծւում է, բայց սնունդը աւելի հեշտ է  
խառնուում հիւթի հետ, և զրանով նրա մարսո-  
ղութիւնը արագանում է:

Ալդպիսով, այդ գործում, ինչպէս յանախ լինում է, ամենից լաւ է չափաւորութիւնը: Սակայն կարեռ է իմանալ, ինչ տեսակ հեղուկ խմել:

Ես ամենեին խորհուրդ չեմ տալ կերակուրի ժամանակ խմել այնպիսի հեղուկ, որ ինքն աղղում է ստամոքսային հիւթի արտաթորման վրայ և զրանով անտարբեր չէ մնում մեր մարմնի համար:

Ալդպիսի հեղուկներին պատկանում են, ի միշտ այլոց, շատ հանքային շրեր, օրինակ վիշի, բորժում, էսէնտուկի և այլն:

Ճիշդ է, այդ հանքային շրերի շիշերի վրայ կպցրած նշանակները յայտնում են, որ այդ շրերը սեղանային ըմպելիքներ են, բայց զրա հետ համաձայնել չենք կարող:

Այդ հանքային շրերը մեծ նշանակութիւն ունին իբրև բուժիչ ջուր, բայց ամենեին սեղանային չեն: Ուրիշ բան է հասարակ ջուրը—աղբիւրի ջուրը:

Լաւագոյն են ածխաթթու գաղերով լցուած շրերը, ինչպէս Կովկասեան նարզանը, զելտերեան ջուրը:

Շնորհիւ ածխաթթուային գաղերի, նրանք միաժամանակ թարմացնում եւ լաւացնում են ճաշկը: Ախորժակը նոյնպէս բացւում է: Այդ շրերը կարելի է յանձնարարել իբրև հանելի սեղանային ըմպելիք:

Ոչ պակաս կարեռը է այն հարցը, թէ կարելի՞ է քնել ճաշից յետոյ: Այս հարցը վճռուել է բժշկականութեան մէջ ոչ միակերպ:

Կենդանիների հետ արած փորձերը ցոլց են տալիս, որ քունը կուշտ և առատ ճաշից յետոյ մի տեսակ խռոված, անհանգիստ է դառնում: Զարթնելով՝ մարդ յանախ զգում է ընդհանուր յողնածութիւն, բերանում ինչ որ մի տեսակ մածուցիչ համ է առնում, սրաի զգալի տակ զգում է ծանրութիւն և երբեմն ալրուել:

Սնկասկած է ուրեմն, որ չէ կարելի յանձնարարել քնելը առատ սննդառութիւնից յետոյ:

Կենդանիների հետ արած վերոլիշեալ փորձը և մարդկանց վրայ կատարած զիատղութիւնները, ըստ երեսյթին, թէև հակասում են միմեանց, բայց կարելի է հաշտեցնել նրանց:

Եթէ առատ սննդից յետոյ մարդու քունը գալիս է, եթէ նա զգում է մի տեսակ անտրամադրութիւն, երբեմն նաև զլխացաւ, զլխապառյա ամառ ժամանակ, այդ ցոլց է տալիս որ նրա մարսողութիւնը ստամոքսում մի քիչ խանդարուած է, իբրև հետեանք այն խանդարման կազմուել են մի քանի վնասակար նիւթեր, որոնք մտնելով արեան մէջ՝ ազդում են ճնշող կերպով չղային սիստեմի վրայ և առաջ են բերում քուն. ուրիշ դէպքերում նրանք կարող են հասցնել այդ միևնույն

հետեանքին, նոյն իսկ չմտնելով արեան մէջ, զըրպուելով չիղեռը, այսինքն ինչպէս ասում են բժբշկականութեան մէջ՝ բէֆյէկտիվ կերպով:

Իրողապէս, շատ կուշտ չկերած ճաշից լետով, քունը սովորաբար վատ հետեանքներ չէ ունենում, ընդհակառակը, յանախ կազմուրում է մարդուս, այնպէս որ երբեմն նոյն իսկ օդաւակար է լինում, օրինակ սակաւարիւն մարդկանց համար:

## ԱՏԱՄՈՔՍԻ ԿԱՏԱՐՈՒԻ ԲԺՇԿՈՒԹԻՒՆԸ

Ժումկալութիւն կամ փահրիդ:—Ստամոքսի լուսցումը:—Դեղներ:—Հանքային ջրեր:

Այժմ տեսնենք, ի՞նչպէս պէտք է բժշկել ստամոքսի կատարը, երբ արդէն հիւանդացել էք նրանով: Այս զլխում ես համառօտարան կլինեմ, որովհետեւ հիւանդի կանոնաւոր բժշկութիւնը պէտք է բացառապէս բժշկի ձեռքով կատարուի:

Որքան էլ լաւ զրուած լինի զիրքը, որքան էլ զուք պարզ կերպով հասկանաք հիւանդութեան էութիւնը, այնուամենայնիւ բժշկել նրան զրքով երեկը չէք կարող:

Զէ որ պէտք է բժշկել ոչ թէ ձեր ստամոքսի կատարը, այսինքն ոչ թէ ինքն հիւանդութիւնը, այլ ձեզ, ստամոքսի կատարով հիւանդացածիդ, այսինքն, իրան հիւանդին:

Եթէ զուք չիշեք թէ որքան լաճախ ստամոքսի կատարին բնկերացած են լինում ուրիշ հիւանդութիւններ, կամ նոյն իսկ նրանցով են պայմանաւորւում, այն ժամանակ կհասկանաք, որ գեղային միջոցները, որոնք օդնեցին ձեր բարեկամին ստամոքսի կատարից բժշկուելու, ձեղ հա-

մար կարող են անպէտք լինել, մինչեւ խոկ վնասակար:

Ահա ինչու, կրկնում եմ, ձեր բժշկութիւնը պէտք է զեկավարէ միայն բժիշկը, որին դուք և պարագաւոր էք վստահանալ ձեր առողջութիւնը: Այդ պատճառով ես կշօշափեմ միայն ստամոքսի կատարքի բժշկութեան ընդհանուր հիմունքը:

Ամենից առաջ ստամոքսի կատարքով հիւանդը պէտք է խոյս տայ այն բոլորից, ինչ որ ինքն ըստ ինքեան կարող է ստամոքսի կատարք առաջ բերել, բոլորովին առողջ մարդու մօտ:

Այդ կողմից նա աւելի զգոյշ պէտք է լինի, որովհետեւ կերակրի այն աննշան փոփոխութիւնը, որն առաջ մարդու համար անպատճէ է անցնում, կարող է խիստ վատթարացնել նրա հիւանդութիւնը:

Բոլոր այդ պայմանների մասին ես արդէն մանրամասն խօսեցի զրքոյկիս 2 և 8-րդ զլուխներում, ուստի այլ ևս չեմ կրկնի:

Բացի արդէն ցոյց տուած ժուժկալական պատուիրանների խիստ պահպանութիւնից, ստամոքսի կատարքի ժամանակ յանախ պէտք է լինում զիմել ստամոքսի սիստեմատիկական լուացման:

Այդ լուացումը կատարւում է այսպէս. բերանով մտցնում են ստամոքսի մէջ մեր վերեռում

լիշած կակուղ բետինալին խողովակը, որ կոչւում  
է ստամոքսալին խորաչափ:

Այդ խորաչափի բերանի կողմի ձալրին հագ-  
ցնում են մի փոքր ապակեալ խողովակ, որն ապա  
միացնում են մի երկայն և աւելի հաստ բետի-  
նալին խողովակի հետ, որ վերջանում է ապակեալ  
ձագարով:

Այդ ձագարի մէջ ածում են եփ սուտած չուր՝  
տաքութեան այս կամ այն ասաինանի, նայելով  
հարկաւորութեան և ապա բարձրացնում են ձա-  
գարը:

Զուրը այդ ժամանակ ձագարից խողովակով  
թափուում է ստամոքսը: Երբ զրի մակերեսովթը  
ձագարի մէջ հասնի ձագարի ներքին ձալրին, ձա-  
գարը իչեցնում են:

Այդ ժամանակ չուրը ստամոքսից վերադառ-  
նում է ձագարը. բայց արդէն ոչ մաքուր, այլ  
ստամոքսի մէջ եղած սննդի խառնուրդներով:

Այդ պղաոր չուրը թափում են, ձագարի մէջ  
նորից մաքուր չուր են ածում, բարձրացնում են  
և երբ չուրը հասնում է ձագարի ներքեի ձալրին,  
դարձեալ ցած են թողնում. նորից ստամոքսից  
ողաոր չուր է դուրս գալիս: Այդպէս շարունա-  
կում են մինչև որ ստամոքսից դուրս է գալիս  
բոլորովին մաքուր չուր:

Դա ցոլց է տալիս, որ ստամոքսի մէջ եղած սննդի բոլոր մնացորդները գուռս են եկել և ստամոքսը բոլորովին մաքուր է և լուացուած:

Հարկաւոր դէպքերում ստամոքսը լուանալու համար չըի փոխարէն զործ են ամում նոյնապէս զանազան դեղերի լուծուածք կամ հանքալին չըեր:

Լուացումը կատարւում է կամ անօթի կամ 6—7 ժամ կերակուրից յետով՝ ըստ հայեցողութեան ըժշկի:

Հիւանդներից շատերն արգէն առաջին անդամից բոլորովին հանդիսաւ են վերաբերում ստամոքսի լուացման. ուրիշներն ընտելանում են 2—3 անգամից յետով:

Որքան էլ առաջին հայուածքից անախորժթուայ ըժշկութեան այդ եղանակը, հիւանդը պէտք է անպայման համածայնի նրան, եթէ ըժիշկը կարեոր է համարում:

Բայց ի՞նչ է ստամոքսի լուացման ազդեցութիւնը:

Ամենից առաջ ստամոքսի լուացմամբ մենք հեռացնում ենք ստամոքսից սննդի բոլոր մնացորդները, որոնք այլապէս, մնալով կը ացախէին և կարտադրէին այնպիսի նիւթեր, որոնք կզրդուէին ստամոքսի լորժաթաղանթը և կսաստկացնէին նրա կատարը:

Բացի դրանից մենք հեռացնում ենք լորձունքը, որը յանախ մեծ քանակութեամբ կուտակւում է ստամոքսի կատարի ժամանակ, արգելելով ստամոքսալին հիւթին մօտենալ սննդին, իսկ այդ նորնպէս, ինչպէս առաջ ասացի, նպաստում է սննդի քացախելուն և փտելուն:

Վերջապէս ստամոքսի լուացումը կազդուրում է ստամոքսի մկանունքը և դրանով նպաստում է սննդի աւելի արագ անցման ստամոքսից աղիքների մէջ:

Եւ իրօք, երբ մենք չուր ենք ածում ստամոքսի մէջ, նա լայնանում է, նրա մկանունքը թուլանում են. իսկ երբ չուրը ստամոքսից յետ է թափում, ստամոքսի ծաւալը փոքրանում է, մկանունքը կծկում են:

Ալդպիսով ստամոքսի լուացումը համարեանոյն է, ինչ որ ստամոքսի մասսաժը, միայն ներքին, որ գործազրւում է անմիջապէս իրա՛ ստամոքսի վրայ և ոչ թէ արտաքին, որովայնային պատերի միջոցով։ Ալդպիսի մասսաժը աւելի է ներգործում։

Ալժմ դուք հասկանում էք, թէ որպիսի մեծ օդուտ է ցոլց տալիս ստամոքսի լուացումը նրա կատարի ժամանակ։ Ալժմ յոյս ունիմ, եթէ պէտք լինի գործազրել նրան ձեր վերաբերմամբ, դուք

յօժարութեամբ կհամածայնէք, լաւ իմանալով, որ  
ապադայում անկասկած օգուտ կստանաք:

Ստամոքսի կատարրի բժշկութեան ուրիշ  
եղանակները կայանում են զանազան դեղեր նշա-  
նակելու մէջ, բայց ես ամենեին չպէտք է շօշա-  
փեմ խնդրի այդ կողմը:

Վերջապէս ստամոքսի կատարրը բժշկում է  
նաև հանքային չըերով, այսինքն այն բուժիչ չըե-  
րով, որոնք բղխում են երկրի ծոցից և պարու-  
նակում են այս կամ այն հանքային նիւթերը  
լուծուած:

Հանքային չըեր ըստ բաղադրութեան, շատ  
կան, բայց նրանք ոչ ամենքը պէտքական են ստա-  
մոքսի կատարրի բժշկութեան համար: Կովկասում  
գտնուող հանքային չըերից ամենից շատ օգտառէտ  
են էսսէնտուկի և Բօրժօմի չըերը: Արտասահմա-  
նում կարլսբադ, Վիշի և ալճ:

Սակայն հանքային չըերը ներգործում են ոչ  
միայն իրանց քիմիական բաղադրութեամբ: Ոչ սա-  
կաւ կարեռ է և նրանց ուրիշ ներգործութիւնը:

Բանք նրանումնէ, որ հանքային չըերում  
աւելի հեշտ է հիւանդին վարել կեանքի այն կա-  
նոնաւոր եղանակը, որ անհրաժեշտ է ստամոքսի  
կատարրի բժշկութեան ժամանակ:

Հիւանդը գալիս է չըերը բացառապէս բժշ-  
կութեան համար. նա չունի ոչ մի զբաղմունք,

հողսեր և անհանգստութիւն։ Նա կարող է իր ժամանակին նաշել, քնել, զբունել։ Նրան չեն հրապուրում արդելուած ուտելիքները, որովհետեւ բոլոր նրան շրջապատող անձինք նոյնպէս հիւանդ են և խստիւ պահպանում են բժշկի պատուիրանները։

Մինչդեռ տանը, ընասանիրի մէջ, շատերը, որոնք գուցէ ստամոքսի կատարրով չեն տանչում, դործածելով այնպիսի կերակուր, որ պէտքական չէ ստամոքսի կատարրի ժամանակ, շարունակ հրապուրում են հիւանդին և նու խախտում է ժուժկալութիւնը։

Բայցի զրանից հիւանդը ճճում է լաւ օդ զրեթէ ամբողչ օրը, որովհետեւ բոլոր հանքալին չըերը գտնուում են գեղեցիկ կլիմա ունեցող տեղերում։

Ենորհիւ բոլոր այդ նպաստաւոր պայմանների ամբողջութեան, հիւանդը սկսում է արագաբար առողջանալ և կատարրի թարմ գէպքերում, բժշկում է և շաբաթուայ ընթացքում։

Աւելի հնացած զէպքերում հարկաւոր է լինում բժշկուել հանքալին չըերում մի քանի տարի շարունակ։

Պէտք է նաև ցոլց տալ, որ այն գեղերը, որոնցով հիւանդը բժշկուում է տանը, հանքալին չըերում աւելի մեծ օգուտ են տալիս։

Այդ բացատրում է այն նպաստաւոր պայման-

ների հաւաքական ամբողջութեամբ, որ մենք զբանում ենք հանքային չըերում և որոնց մասին ես այժմ խօսեցի:

Ուստի անխոհեմութիւն կը լինէր հիւանդի կողմից, ինչպէս այդ գժբաղզաբար երբեմն լինում է, հրաժարուել, հանքային չըերը հասնելիս, որևէ գեղից այն պատճառով, թէ նա արգէն տանը ընդունել է այդ գեղերը, ըստ երեսլթին, առանց մի առանձին յաջողութեան:

Սակայն որքան էլ լսւ առողջանայ հիւանդը հանքային չըերում, նա պէտք է դեռ երկար մի քանի տարիների ընթացքում դործագրէ վերեռում մեր ցոյց տված ժուժկալական կանոնները, նոյն իսկ եթէ ստամոքսի կատարը բոլորովին անհետացել է:

Տակառակ դէպքում ստամոքսի կատարը կարող է կրկնվել, որովհետեւ ով մի անդամ արգէն հիւանդացել է ստամոքսի կատարով, նա նախատրամագրուած է միենոյն ցաւով նորէն հիւանդանալու:





X

X

